ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ԼՈՒՍԱԿՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

*2024-2029 թթ.*



*Տնօրենի հավակնորդ՝ Տաթևիկ Մուշեղի Մնացականյան*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


**Ներածություն**------------------------------------------------------------------------------------------------2

**Դպրոցի առաքելությունը**-------------------------------------------------------------------------------3

**Ընդհանուր տեղեկություններ**-----------------------------------------------------------------------4

**1.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր-------------------------------------6

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսները---------------------------------------------7

1.ա. Ի՞նչ կրթական կարիքներ է այն բավարարելու--------------------------------------------------8

1.բ. Համապատասխանում է պետության կրթական միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին---------------------------------------------------9

1.գ. Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին ----------------------------------------------------------9

**2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ՏԵՂԵՐԸ**

2.ա. Հաստատության շենքային պայմաններ---------------------------------------------------------18

2.բ. Հաստատության նյութատեխնիկական բազան---------------------------------------------------22

2.գ. Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները---------24

2.դ. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները-----------------------------32

2.ե. Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ----------------------------------------------42

2.զ. Հաստատության ուսումնական միջավայրը------------------------------------------------------43

2.է. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ---------------------------------------------------------------------------------------------45

2.ը. Հաստատության տրամադրած կրթության որակը-------------------------------------------------48

2.թ. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները------------------------------------------------------------------------------------60

2.ժ. Հաստատությունում առկա հիմնախնդիրները----------------------------------------------------63

**3. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ՏԵՂԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ, ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԵՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ -65**

**4. ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ , ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ, ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ**--------------------------------75

**5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**----------------------------------------------------------------------------87

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ------------------------------------------------------------------------------------------120

*Սույն զարգացման ծրագիրը*
*կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 22.09.2022թ. «Պետական հանրակրթական*
*Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման*
*պահանջներն ու ձևաչափը հաստատելու մասին» N 35-Ն հրամանի*
*պահանջներին համապատասխան:*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդկության գոյատևումն ու առաջընթացն ապահովող հիմնական գործոնը կրթությունն է: Տարեցտարի կրթության դերը վերաիմաստավորվում է, հետևաբար առաջ են գալիս նոր խնդիրներ, նոր պահանջներ և արդյունքում նոր նպատակադրումներ: Քաղաքակրթության նվաճումների, սոցիալական փորձի, գիտական նվաճումների ավանդական փոխանցման ձևն այլևս արդիական չի և պահանջվում է նոր մոտեցումներ, մեթոդներ ու միջոցներ: Այս ամենին զուգահեռ առաջ է գալիս մարդու հոգևոր արժեքների, հանդուրժողականության, համագործակցության որակների զարգացում: Կրթությունը միտված է ապահովել հասարակական-պետական պատվերը: Ժամանակի հրամայական է դառնում կրթության շարունակականության ապահովման համար համապատասխան հիմքերի և միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը: Անհրաժեշտություն է դառնում կրթությունը սերտորեն կապել կյանքի հետ և գնալ կրթության համակարգի բարեփոխումներին:

Կրթական աշխարհի մեջ մաս է կազմում նաև ՀՀ Արագածոտնի մարզի Լուսակնի միջնակարգ դպրոցը/այսուհետ՝ Լուսակնի միջնակարգ դպրոց/, որը նույնպես կարիք ունի զարգացման, առաջընթացի ու բարեփոխումների: Նշված նպատակներին հասնելու և առաջադրված խնդիրները հաջողությամբ լուծելու հաջորդական քայլերը, միջոցներն ու գործողությունները նշված են Լուսակնի միջնակարգ դպրոցի զարգացման 5-ամյա ծրագրում: Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որով սահմանվում է 2024-2029 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները, խնդիրներն ու նպատակները և դրանց հասնելու ուղիները:

Ծրագրում նախանշված է դպրոցի զարգացման նոր ուղիներն ու հնարավորությունները, գիտելիքահենն որոկյալ կրթությունն ապահովող մեխանիզմների մշակումն ու կյանքի կոչման ուղենիշները: Ակնկալվող արդյունքները պետք է ապահովեն սովորողների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, հայեցի դաստիարակությունը՝ հոգևոր ու ազգային արժեքների վրա խարիսխված:

## ***ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ***

Առաքելությունն այն է, ինչի իրականացման համար կոչված է ուսումնական հաստատությունը: Դպրոցի առաքելությունը հասարակության և պետության շահերից բխող ուսուցման ու դաստիարակության միասնական գործընթացի ապահովումն է, որը նպատակաուղղված է հայ ժողովրդի և մարդկության հոգևոր ժառանգությունը, գիտելիքներն ու փորձը յուրացնելուն, պահպանելուն, հարստացնելուն և սերունդներին փոխանցելուն:

*Լուսակնի միջնակարգ դպրոցի տեսլականը առաջիկա հինգ տարիների համար.*

- Բարեկեցիկ ու ապահով կրթական միջավայր, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը, նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը:

-Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթության ապահովում:

-Հետագա կյանքում սովորողների ինքնահաստատման համար անհրաժեշտ կոմպետենցիաների ձեռքբերման բարենպաստ կրթական միջավայրի ապահովում:

-Յուրաքանչյուր սովորողի կարիքներին համահունչ անհրաժեշտ ուշադրության ապահովում:

- Ազգային արժեքներ կրող, ժողովրդավարական հասարակության քաղաքացու ձևավորումը:

- Ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված վերահսկողություն՝ փոխներգործուն դասավանդում և յուրացում:

-Աշխատանքների արդյունավետության համար ամենատարբեր մակարդակներում ներգրավել աշխատող և տարբեր պաշտոններ զբաղեցնող մարդկանց, իսկ կիզակետում պետք է լինի ուսումնական գործընթացը և ուսուցիչների մասնագիտական զարգացումն ու աճը:

-Կարևորել վերահսկողության դերը դպրոցի միջավայրի փոփոխության, դասավանդման որակի բարելավման և փոփոխությունների իրականացման տեսանկյունից:

- Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորում:

-Սահուն կերպով ներդնել հանրակրթական պետական նոր չափորոշիչը, ուսուցման գործընթացի կազմակերպման և ուսուցման արդյունքների գնահատման նոր համակարգը՝ կարևորել սովորողների կարողությունների և հմտությունների , հատկապես արժեքային համակարգի ձևավորման խնդիրները:

-ՈՒսումնական գործընթացում ապահովել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների հրաձուն ներդրումը:

-Ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթություն ստանալու իրավունքներն ու հնարավորությունները:

- Հանրակրթական հիմնական ծրագրերի հաջորդականության ապահովումը:

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է:
Լավագույն ապագայի երաշխիքը որոկյալ կրթության ապահովումն է: Բոլոր շահառու խմբերի բարոյական պարտականությունն է որոկյալ կրթության ապահովման համար առողջ ու նպաստավոր պայմանների ստեղծումը: Կրթությունն այն հզոր զենքն է, որը երաշխավորում է հասարակության առաջընթացն ու զարգացումը:
***Լուսակնի միջնակարգ դպրոցի*** *հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Կառավարության (այսուհետ՝* ***Հիմնադիր****):*

1.<<Լուսակնի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը հիմնադրվել է 1990թ: Սկզբում գործել է որպես <<Արագածոտն մարզի Լուսակն գյուղի ութամյա դպրոց>>, այնուհետև իրավահաջորդը եղել է <<Լուսակնի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ը, իսկ 2017թ հոկտեմբերի 12-ի ՀՀ կառավարության N 1300-Ն որոշմամբ <<Լուսակնի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի իրվահաջորդը դարձել է <<Լուսակնի *միջնակարգ* դպրոց>> ՊՈԱԿ-ը:

<<Լուսակնի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ը 2003թ. հունվարի 23-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում (պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 94.210.00361, վկայականի համարը 03Ա059075, ծածկագիր՝ 10022273):

2017թ փետրվարի 14-ին <<Լուսակնի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ին տրվել է հանրակրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային համապատասխան տեղերով կրթական գործունեության լիցենզիաներ.

- **տարրական** հանրակրթական (լիցենզիա N 1191) 25 տեղ,
- **հիմնական** հանրակրթական (լիցենզիա N 1086) 25 տեղ,
- 2018թ մարտի 21-ին էլ <<Լուսակնի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ին՝ **միջնակարգ** հանրակրթական (լիցենզիա N 0910) 25 տեղ :

Շենքի ընդհանուր հզորությունը 75 աշակերտի համար է:

Լուսակնի միջնակարգ դպրոցին ամենամոտ հարակից բնակավայրը գտնվում է 13կմ հեռավորության վրա:

2.ՈՒսումնական հաստատությունն իր գուրծունեության ընթացքում ղեկ-ավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 14.11.2017թ., գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից:

- Դպրոցի հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին խոշորացված համայնք, գյուղ Լուսակն, փողոց 1, տուն 18,
- էլեկտրոնային փոստի հասցեն՝ lusakn@schools.am,
- կայքը՝ lusakn.schoolsite.am ,
- փոստային դասիչը՝ 0505:

Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Կնիքը, ձևաթղթերը և անհատական այլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող են զուգակցվել անգլերենը և ռուսերենը:

4.Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ

# 1.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

***Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր***

**<<Լուսակնի** միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ն իր իրավասության շրջանակներում կազմակերպում ու իրականացնում է ընդունելություն և ուսումնական գործընթացի մեթոդական ապահովման, կազմակերպման և իրականացման, կադրերի ընտրության և տեղաբաշխման, գիտական, ֆինանսատնտեսական և այլ գործունեություն՝ <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<ՊՈԱԿ-ների մասին>>, <<Երեխայի իրավունքի մասին>> և այլ օրենքներով, <<ՀՀ աշխատանքային օրենսգրքով>>, դպրոցի կանոնադրությամբ, որով սահմանվել է դպրոցի իրավասությունները, ինչպես նաև կառավարման մարմիններից յուրաքանչյուրի իրավասությունները և լիազորությունները, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Հանրակրթական հիմնական ծրագրերն իրականացվում են չափորոշչի (նաև նոր) նորմերի և դրույթների համաձայն: <<Լեզվի մասին>> ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան դպրոցում ուսուցումն իրականացվում է գրական հայերենով, ուսումնական պլանները կազմվում են կանոնադրությամբ սահմանված կարգով՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանների հիման վրա: Դպրոցն ունի <<Ներքին կարգապահական կանոններ>>, պատշաճ կերպով իրականացվում է դպրոցի գործունեության մասին ամենամյա հաշվետվությունները:

Դպրոցում պարտադիր գործածության փաստաթղթերն են.

1. Էլեկտրոնային դասամատյաններ
2. Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ
3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների և գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն.
10. Ուսուցիչների բաց թողած և փոխարինված դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12. Դասալսումների արդյունքների արձանագրություն
13. Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
14. Սովորողների շարժի մատյան

Լուսակնի միջնակարգ դպրոցի 2024-2029 թվականների զարգացման ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել <<Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ ռազմավարական ծրագիրը>>, <<Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը>>, դպրոցի տարիֆիկացիոն մատյանները, ներքին գնահատման հաշվետվությունները, վերը նշված փաստաթղթերը, հաշվի է առնվել ինչպես վերը նշված օրենսդրական պահանջները, այնպես էլ Լուսակնի միջնակարգ դպրոցի նախորդ տարիների գործունեության արդյունքները, դպրոցի և Լուսակն գյուղի առանձնա-հատկությունները, կրթական քաղաքականության արդի պահանջներն ու մարտահրավերները, ինքնազարգացման հնարավորություններն ու միջոցները:

***Դպրոցի զարգացման ծրագիրը*** ուսումնական հաստատության ռազմավարական փաստաթուղթն է, որով պլանավորված է Լուսակնի միջնակարգ դպրոցի առաջիկա 5 տարիների աշխատանքը: Դպրոցի զարգացման ծրագիրն ընդգրկում է պլանավորման հետևյալ բաղադրիչները՝ իրավիճակի վերլուծություն, կոնկրետ նպատակների և խնդիրների սահմանում, կարևորագույն գործողություններ, միջոցառումներ, որոնք ապահովում են սահմանված նպատակների իրականացումը, այդ գործողությունների հաջորդականությունն ու ժամանակացույցը, պատասխանատուները, արդյուն-քների գնահատման չափանիշները և այլն:

***<u>Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսները</u>***









***<u>1.ա Ի՞նչ կրթական կարիքներ է այն բավարարելու:</u>***

- համակողմանիորեն ու ներդաշնակ զարգացած,
- ինքնության հստակ գիտակցումով,
- հասարակության մեջ անհատի իր դերի հստակ դիրքորոշմամբ,
- ազգային արժեհամակարգի և հոգեկերտվածքի կրող,

- հայրենիքի և ազգային եկեղեցու նկատմամբ անձնուրաց և բարեպաշտ վերաբերմունքով,
- դժվարությունները հաղթահարելու կամքով օժտված քաղաքացիներ:

***<u>1.բ . Համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին:</u>***

21-րդ դարի մարտահրավերներին դիմակայելու, ինչպես նաև արդի կրթական պահանջներն ապահովելու համար պետք է՝

1.Ապահովել կրթության հասանելիությունը, անխտիր, բոլոր դպրոցահասակ երեխաների համար:

2.Խթանել սովողների հետաքրքրությունը կրթության նկատմամբ, ապահովել գիտելիքահեն կրթություն, զարգացնել սովորածը գործնականում կիրառելու հմտություններ, ընդլայնել կարողությունները:

3.ՈՒսումնական գործընթացում չկաշկանդել սովորողի նախաձեռնողականությունը, ինքնուրույն դրսևորվելու կարողությունները, ստեղծագործ միտքը, պայքարող ոգին, ակտիվությունը:

4.Ընդլայնել սովորողների հետաքրքրությունների շրջանակը, ստեղծել համապատասխան միջավայր իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան լավագույնս դրսևորվելու համար :

5.Զարգացնել սովորելու և հաղորդակցվելու կարողությունները, մտածելակերպը, լեզվատրամաբանությունը, ապահովել շփումը հասակակիցների հետ՝ տարաբնույթ միջոցառումների շրջանակներում, էքսկուրսիաների, այցելությունների միջոցով:

6.Մասնագիտորեն կողմնորոշել՝ հաշվի առնելով սեփական ներուժն ու հնարավորությունները, համայնքի կարիքներն ու պահանջարկը: Բազմակողմանի կրթական նպատակներին միաժամանակ հասնելու հնարավորություն ընձեռել:

7.Սերմանել ազգասիրություն, հայրենասիրություն, մարդասիրություն, հանդուրժողականություն, <<մենք>>-ի գաղափարը:

***<u>1.գ Համապատասխանում է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:</u>***

Թեպետ դպրոցը գործում է հարմարեցված շենքային պայմաններում (բնակելի տանը), սակայն եղած հնարավորություններով ու մարդկային ռեսուրսներով հնարավոր է ապահովել վերոնշյալը: Ներկա դրությամբ դպրոցում չկան մանկավարժի թափուր հաստիքներ, աշխատում են բանիմաց, մասնագիտությանը տիրապետող , համերաշխ , պատասխանատու և ներհուն մանկավարժներ: Դպրոցի տիպային նոր շենքի շահագործումից հետո մեր առջև դրված խնդիրներն ու նպատակներն իրագործելն ավելի դյուրին կդառնա, կընդլայնվի աշխատելու և առաջընթացի հնարավորությունները:

***Ուսումնական հաստատության մարդկային ռեսուրսներ՝***

ա***. Վարչական աշխատող (տնօրեն)-1***

***բ. Մանկավարժական աշխատողներ և որակավորման նկարագիրը - 15 ուսուցիչ և գրադարանավար***

| | |
|---|---|
| **Բարձրագույն կրթությամբ մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը** | 15 |
| **Այդ թվում՝ ուսուցիչների թիվը, ովքեր ավարտել են 1-ից ավել ԲՈՒՀ** | 2 |
| **ՈՒսուցիչների թիվը, ովքեր չեն ունեցել մանկավարժի որակավորում, սակայն մանկավարժական ստաժի շնորհիվ որակավորվել են** | 2 |
| *ՀՊՄՀ-ն ավարտած ուսուցիչների թիվը* | 3 |
| *ԵՊՀ-ն ավարտած ուսուցիչների թիվը* | 6, որից մեկը նաև ՀՊՄՀ-ն է ավարտել |
| *ՀՊՃՀ-ն* | 1 |
| *ՀՖԿՄՊՀ-ն* | 1 |
| *Հրազդանի հումանիտար ինստիտուտը* | 2 |
| *Մոնթե Մելքոնյանի անվան համալսարանը* | 1 |
| *Երևանի Վ.Բրյուսովի անվան լեզվահաս. համալսարանը* | 1 |
| **Միջին մասնագիտական կրթությամբ կամավոր ատեստավորումն անցած** | 1 |

| | |
|---|---|
| ուսուցիչների թիվը | |
| Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը և տոկոսը: | 0 |
| Բարձրագույն կրթությամբ կամավոր ատեստավորումն անցած ուսուցիչների թիվը | 1 |
| Մագիստրոսի աստիճան ունեցող ուսուցիչների թիվը | 3 |
| Ոխսանող ուսուցիչների թիվը | 1(ՀՊՄՀ մագիստրատուրա) |
| Նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում պարտադիր վերապատրաստում և ատեստավորում անցած ուսուցիչների թիվը | 5 |
| Ուսուցիչների միջին տարիքը | 37 |
| Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը | 1 |
| Դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը: | 15, 100% |
| Ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում` ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը | 15, 100% |
| Գրադարանավարի կրթությունը | Միջին մասնագիտական |
| Որպես գրադարանավար աշխատանքային ստաժը | 12 տարի |

**2019թ – ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիոն ցուցակների**

«Լուսակնի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի ցուցանիշները կազմել են՝

աշակերտների թիվը - **40** աշակերտ

դասարանների թիվը – **8** դասարան

դասաժամերի քանակը **– 241.5** դասաժամ

աշխատողների թվաքանակը - **17** որից՝

վարչական աշխատողներ – **1** միջին ամսեկան աշխատավարձը - **165350**

մանկավարժներ – **11** միջին ամսեկան աշխատավարձը - 135323

մանկավարժական հաստիքներ –0 միջին ամսեկան աշխատավարձը -0

սպասարկող անձնակազմ – **4** միջին ամսեկան աշխատավարձը – **80871**

հաշվապահ - **1** - միջին ամսեկան աշխատավարձը – **66138**

**2020թ – ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիոն ցուցակների**

«Լուսակնի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի ցուցանիշները կազմել են՝

աշակերտների թիվը - **45** աշակերտ

դասարանների թիվը – **8** դասարան

դասաժամերի քանակը **– 244.5** դասաժամ

աշխատողների թվաքանակը - **18** որից՝

վարչական աշխատողներ – **1** միջին ամսեկան աշխատավարձը - **211642**

մանկավարժներ – **12** միջին ամսեկան աշխատավարձը - 123997

մանկավարժական հաստիքներ –0 միջին ամսեկան աշխատավարձը -0

սպասարկող անձնակազմ – **4** միջին ամսեկան աշխատավարձը – **96942**

հաշվապահ - **1** - միջին ամսեկան աշխատավարձը – **66138**

**2021թ – ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիոն ցուցակների**

«Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ցուցանիշները կազմել են՝

աշակերտների թիվը - **45** աշակերտ

դասարանների թիվը – **9** դասարան

դասաժամերի քանակը **– 267** դասաժամ

աշխատողների թվաքանակը - **20** որից՝

վարչական աշխատողներ – 1 միջին ամսեկան աշխատավարձը - **211642**

մանկավարժներ – **14** միջին ամսեկան աշխատավարձը - **122702**

սպասարկող անձնակազմ – **4** միջին ամսեկան աշխատավարձը – **96942**

հաշվապահ - **1** - միջին ամսեկան աշխատավարձը – **66138**

**2022թ – ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիոն ցուցակների**

«Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ցուցանիշները կազմել են՝

Աշակերտների թիվը - **40** աշակերտ

դասարանների թիվը – **9** դասարան

դասաժամերի քանակը **– 283** դասաժամ

աշխատողների թվաքանակը - **19** որից՝

վարչական աշխատողներ – **1** միջին ամսեկան աշխատավարձը - **211642**

մանկավարժներ – **13** միջին ամսեկան աշխատավարձը – **122120**

սպասարկող անձնակազմ – **4** միջին ամսեկան աշխատավարձը – **96700**

հաշվապահ - **1** - միջին ամսեկան աշխատավարձը – **66138**

**2023թ – ի սեպտեմբերի 1-ի դրությամբ ըստ տարիֆիկացիոն ցուցակների**

«Լուսակնի միջնակարգ դպրոց » ՊՈԱԿ-ի ցուցանիշները կազմել են՝

աշակերտների թիվը - **37** աշակերտ

դասարանների թիվը – **9** դասարա

դասաժամերի քանակը **– 285** դասաժամ

աշխատողների թվաքանակը - **21** որից՝

վարչական աշխատողներ – **1** միջին ամսեկան աշխատավարձը -323400

մանկավարժներ – **15** միջին ամսեկան աշխատավարձը - 168592

մանկավարժական հաստիքներ –1 միջին ամսեկան աշխատավարձը - 52000

սպասարկող անձնակազմ – **4** միջին ամսեկան աշխատավարձը – 107041

հաշվապահ - **1** - միջին ամսեկան աշխատավարձը – 66138

***Ըստ դասարանների՝ սովորողների թիվն ընթացիկ և նախորդ չորս ուսումնական տարիների համար:***

| Դասարաններ | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 |
|---|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 4 | 5 | 2 | 2 | 3 |
| 2-րդ դասարան | 7 | 4 | 5 | 2 | 2 |
| 3-ին դասարան | 6 | 7 | 4 | 5 | 2 |
| 4-րդ դասարան | 5 | 6 | 7 | 3 | 3 |
| 5-ին դասարան | 1 | 5 | 6 | 7 | 3 |
| 6-րդ դասարան | 2 | 2 | 6 | 5 | 7 |
| 7-ին դասարան | 2 | 3 | 3 | 7 | 5 |
| 8-րդ դասարան | 7 | 1 | 2 | 2 | 6 |
| 9-րդ դասարան | 3 | 7 | 1 | 2 | 2 |
| 10-րդ դասարան | 2 | 4 | 9 | 1 | 0 |
| 11-րդ դասարան | 1 | | 0 | 4 | 0 |
| 12-րդ դասարան | 0 | 1 | 0 | 0 | 4 |
| Ընդամենը | 40 | 45 | 45 | 40 | 37 |

**Գալիք 5 ուսումնական տարիների համար << Լուսակնի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ -ում, ըստ կոմպլեկտավորման, մոտավորապես կլինի հետևյալ ցուցանիշները**

| | 2023-2024 | 2024-2025 | 2025-2026 | 2026-2027 | 2027-2028 |
|---|---|---|---|---|---|
| Աշակերտների թիվը | 37 | 37 | 40 | 44 | 47 |
| Դասարանների թիվը | 9 | 10 | 10 | 11 | 12 |
| Աշխատողների | 21 | 29 | 29 | 29 | 29 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| թվաքանակը՝որից | | | | | |
| Վարչական աշխատողներ | 1 | 3 | 3 | 3 | 3 |
| Մանկավարժական աշխատողներ | 16 | 20 | 20 | 20 | 20 |
| Սպասարկող անձնակազմ | 4 | 6 | 6 | 6 | 6 |

*Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ ընթացիկ և նախորդ չորս ուսումնական տարիների համար:*

| Ուսուցիչների թիվը | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 |
|---|---|---|---|---|---|
| Մինչև 30 տարեկան | 4 | 4 | 3 | 4 | 5 |
| 31-ից 40 տարեկան | 3 | 4 | 6 | 6 | 8 |
| 41ից -50 տարեկան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 51-ից -55 տարեկան | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| 56 տարեկան և ավելի | 7 | 6 | 6 | 5 | 2 |

*գ.ուսումնաօժանդակ անձնակազմ- 4 աշխատող*

| Պաշտոնի անվանումը | Աշխատողների քանակը | Դրույքների թիվը | Աշխատողների միջին տարիքը |
|---|---|---|---|
| Հաշվապահ/օպերատոր | 1 | 0.5+0.75 | 55 |
| Պահակ/գիշ./ | 2 | 2 | 54 |
| Հավաքարար | 1 | 1 | 75 |

*<<Լուսակնի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ-ի ֆինանսական գործունեությունը վերջին 4 տարիների ընթացքում*

**2019թ – ին** «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական ցուցանիշների **ծախսային հոդվածները** կազմել են՝

**Ֆինանսավորումը -22008.7**

**տարեսկզբի մնացորդը -306.9**

**ծախսը -21807.6**

- աշխատավարձ - 20990.3 - 95%
- ջեռուցում (հոսանք) - 301.8 - 2,0 %
- տեղեկատվական - 36.0 - 0,16%
- գրասենյակային - 60.0 - 0,27 %

- հանրային սնունդ - 129.6 - 0,58 %
- հատուկ նպատակային նյութեր - 81.6 - 0,37 %
- պարտադիր վճար - 10.2 – 0,05 %
- վարչական սարքավորում - 170.1 – 0,78 %
- այլ ծախսեր - 28.0 - 0,12 %

**2020թ -ին** «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական ցուցանիշների **ծախսային հոդվածները** կազմել են՝

**ֆինանսավորումը -31133.6**

**տարեսկզբի մնացորդը -508.0**

**ծախսը -27861**

- աշխատավարձ - 26647.6 - 95.6 %
- ջեռուցում (հոսանք) - 326.1 - 1.2 %
- ներքին գործուղում - 198.9 - 0.7 %
- տրանսպորտ ծախս - 235,6 - 0,9 %
- համակարգչային ծառ․ - 120,0 - 0,7%
- գրասենյակային - 107,0 - 0,4 %
- հանրային սնունդ - 191,0 - 0,7 %
- հատուկ նպատակային նյութեր - 126,0 - 0,5 %
- նյութեր - 40,0 - 0,1 %
- վարչական սարքավորում - 51,7 – 0,2 %
- այլ ծախսեր - 73,6 - 0,3 %

**2021թ -ին** «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական ցուցանիշների **ծախսային հոդվածները** կազմել են՝

**Ֆինանսավորումը -28706.4**

**տարեսկզբի մնացորդը -2379.7**

**ծախսը** **- 30627.3**

- աշխատավարձ - 28721,8 - 93,8 %
- ջեռուցում (հոսանք) - 581,7 - 1,9 %
- ներքին գործուղում - 55,0 - 0.2 %
- տրանսպորտ ծախս - 412,8 - 1,3 %
- ընթացիկ նորոգում - 797,4 - 2,9%
- գրասենյակային - 135,4 - 0,4 %
- հանրային սնունդ - 132,9 - 0,4 %
- հատուկ նպատակային նյութեր - 300,0 - 1,0 %
- վարչական սարքավորում - 110,0 – 0,4 %
- այլ ծախսեր - 177,7 - 0,6 %

**2022թ -ին** «Լուսակնի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսական ցուցանիշների **ծախսային հոդվածները** կազմել են՝

**Ֆինանսավորումը** **-31145.6**

**տարեսկզբի մնացորդը** **-1858.5**

**ծախսը** **-32842.9**

- աշխատավարձ - 30295,2 - 92,2%
- ջեռուցում (հոսանք) - 826,1 - 2,5 %
- տրանսպորտ ծախս - 461,4 - 1,4 %
- մասնագիտական զարգացում - 72,0 - 0,2%
- տեղեկատվական - 69,8 - 0,2 %
- գրասենյակային - 129,9 - 0,4 %
- հանրային սնունդ - 255,4 - 0,8 %
- հատուկ նպատակային նյութեր - 230,0 - 0,7 %
- պարտադիր վճար - 169,6 – 0,5 %
- վարչական սարքավորում - 225,9 – 0,7 %
- այլ ծախսեր - 107,6 - 0,7 %

# 2.ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

## *2.ա Հաստատության շենքային պայմանները*

Դպրոցի շենքը հարմարեցված է: Կառուցվել է 1983թ: Սկզբում ծառայել է որպես բնակելի տուն, այնուհետև շենքում 2 տարի գործել է մանկապարտեզ, դպրոցի հիմնադրման օրվանից՝ 1990թ սեպտեմբերի 1-ից , ծառայում է որպես դպրոցի շենք: Դպրոցի շենքը երկհարկանի 2 բնակելի մեկ միացյալ շինություն է: Շենքը մեկ անգամ է վերանորոգվել, 2008 թ. կատարվել է ներքին հարդարման աշխատանքներ: Վերանորոգման ժամանակ միջնապատը հանվել է և դարձել 1 ամբողջական շենք, որն ունի 9 սենյակ, որից 8 հարմարեցված փոքր դասասենյակներ են, 8-ից մեկը գրադարան-դասասենյակ է, 9-րդն էլ վարչական կաբինետ-ուսուցչանոց, գործում է 2 զուգարան: 2-րդ հարկի մի հատվածն էլ ուսումնական նպատակով օգտագործել հնարավոր չէ, քանի որ տանիքը կտրուկ թեքությամբ նստած է պատին ու առաստաղ էլ չկա, այս 2 եռանկյունաձև <<սենյակները>> ծառայում են որպես գույքի պահեստ: Երկրորդ հարկի միջանցքի մի հատվածն էլ պոլիէթիլենային թաղանթով առանձնացված է որպես դասասենյակ : Մինչև անհատույց պայմանագրի կնքելը (2016թ նոյեմբերի 29) հիմնարար վերանորոգման մասին խոսք անգամ չէր կարող լինել, քանի որ շենքը դեռևս բնակելի, մասնավոր տուն էր համարվում: Պետգույքին հանձնելուց հետո առաջնային նպատակն էր լիցենզավորելը, միջնակարգ դարձնելը, ապա՝ վերանորոգելը: Մեր՝ տարիների չարչարանքներին ու խնդիրներին, պատկան մարմիններնականջալուր եղան՝ վերանորոգման փոխարեն որոշվեց կառուցել նոր մոդուլային դպրոցի շենք, որը շահագործման կհանձնվի 2024-2025 ուսումնական տարում:

Դպրոցի ներկայիս գործող շենքն ունի բաց պատշգամբ: Շենքի ողջ մակերեսը կազմում է 268.6մ$^2$, իսկ հողատարածքի մակերեսը՝ 0,2483 հա: Շենքն ունի 1 մուտքային և 1 ելքային դուռ, դեպի պատշգամբ բացվում են 4 դռներ: Տանիքը ազբոշիֆերից է, ցանկապատը՝ ցանցից: Շենքը վթարային է: Երկայնակի պատերն ունեն մեկ տակ շարվածք: 1-ին հարկի փայտյա պատուհանները փոխված են, տեղադրվել են եվրոպատուհաններ, մուտքի դուռը նույնպես փոխվել է, փայտյա դուռը փոխարինվել է դեպի դուրս բացվող մետաղական դռնով:

Դպրոցում ջրամատակարարումը շուրջօրյա է, կոյուղացումը՝ անհատական, ջեռուցումն իրականացվում է ըստ դասարանների՝ էլեկտրաջեռուցիչներով, գազամատակարարումը, տաք ջրամատակարարումը, տրանսպորտային միջոցները բացակայում են:

*1-ին հարկում կա՝*

21մ² մակերես ունեցող 2 դասասենյակ
23 մ² մակերես ունեցող 1 գրադարան-դասասենյակ
36 մ² մակերես ունեցող ունեցող 1 դասասենյակ, որտեղ անցկացվում են նաև միջոցառումները, ձմռան ամիսներին էլ՝ ֆիզկուլտուրայի պարապմունքները
15 մ² մակերես ունեցող վարչական կաբինետ-ուսուցչանոց
3.3 մ² մակերես ունեցող 2 գործող զուգարան

*2-րդ հարկում կա՝*

18 մ² մակերես ունեցող 4 դասասենյակ
18 մ² մակերես ունեցող 2 գույքի պահեստ
6 մ² մակերես ունեցող դասասենյակ՝ առանձնացված միջանցքի մի հատվածից տարածքի մնացած մասն էլ՝ միջանցքներն են:

Դպրոցամերձ տարածքում ամեն տարի իրականացվում է ծառատունկ, սակայն տարածքը բնականից աննշան խորության վրա սալապատ է և որևէ ծառատեսակ աճեցնելը դժվար է: Փոսերի փորման աշխատանքները նույնիսկ իրականացվել են հատուկ տեխնիկայի միջոցով, այս դեպքում նույնպես արդյունք չի եղել: Դեկորատիվ և պտղատու այգի հիմնելու նպատակով դպրոցի հողատարածք հասցվեց նաև ոռոգման ջրի ցանցը: Դպրոցի աշխատողների, սովորողների հոգատար խնամքն էլ անզոր էր քարակերտ այս տարածքում հիմնել մեր երազանքի այգին:





















Նոր շենք









## *2.բ Հաստատության նյութատեխնիկական բազան*

Շենքային ներկայիս պայմաններին համապատասխան դպրոցի նյութատեխնիկական բազան բավարար է: Մինչև 2015 թվականը դպրոցը գրեթե չի ունեցել նոր ու սեփական գույք: 2015 և 2016 թվականներին սեփական միջոցներով ձեռք է բերվել ամբողջովին նոր գույք: Հետագա տարիներին էլ նույնպես ձեռք է բերվել ու թարմացվել գույքը: Բոլոր դասասենյակներում կան նոր սեղան- աթոռներ, 1-ական գրապահարաններ, 1-ական կախիչներ, 1-ական գրատախտակներ: Դասասենյակների փոքր չափերի պատճառով ուրիշ գույք հնարավոր չէ ավելացնել: Դպրոցի նյութատեխնիկական բազան բավարար չէ, սակայն եղածով բավարարվում ենք, քանի որ չկա համակարգչային կաբինետ, որտեղ կարելի էր տեղադրել համակարգչային սարքավորումները: Համակարգչային առանձին սենյակ չլինելու պատճառով համակարգիչները տեղադրված են դասասենյակներում:

2020թ դեկտեմբերի 4-ին ԾԻԳ պետական հիմնարկից դպրոցը ստացավ համակարգիչ, մոնիտոր, անխափան սնուցման սարք, բազմաֆունկցիոնալ սարք, պրոեկտոր, տեսախցիկ, եռոտանի վեբ տեսախցիկի համար, պրոեկտոր էկրան, բաձրախոս, համակարգչի խոսափող, որոնք օգտագործվում են լիարժեք:

ՇԵՆ բարեգործական ընկերության նվիրատվության արդյունքում համակարգիչների թիվը 6 դարձավ: Ասպիսով՝ գրեթե բոլոր առարկաների դասաժամերին ակտիվորեն կիրառվում է համակարգչային տեխնիկան՝ այն դարձնելով ուսուցման ժամանակակից միջոց: Առարկայական լաբորատորիաների բացակայության պատճառով փորձերն իրականացնում են էլեկտրոնային լաբորատորիաների միջոցով: Դպրոցն ապահովված է հասանելի ինտերնետ կապով:

Բավարար պայմանների բացակայության պատճառով դպրոցում իրականացվում է <<չոր սնունդ >> ծրագիրը: Չոր սննդի պահպանման համար դպրոցն ունի անհրաժեշտ գույքը՝ սառցարան, ջերմային ռեժիմի կարգավորմամբ, պահարան, սպասք: Եթե դպրոցում լիներ ազատ տարածք, ապա տարրական դասարանների սովորողներին կտրամադրվեր տաք սնունդ:

**Դպրոցի գույքը 01.11.2023թ. դրությամբ**

| հ/հ | Գույքի անվանումը | Քանակը |
|---|---|---|
| 1 | Համակարգիչ | 6 (3 նվիրատվ.) |
| 2 | Շախմատի գույք | 6 |
| 3 | Գրատախտակ նոր<br>Գրատախտակ հին | 6<br>3 |
| 4 | Աշակերտական սեղան-նստարան տարրական | 17 |

| | | |
|---|---|---|
| | Աշակերտական սեղան-նստարան հինական | 15 |
| 5 | Ուսուցչի սեղան նոր<br>Ուսուցչի սեղան հին | 4<br>5 |
| 6 | Աթոռ | 22 |
| 7 | Կախիչ | 6 |
| 8 | Պահարան նոր<br>Պահարան հին | 7<br>3 |
| 9 | Էլ. ջեռուցիչ | 10 |
| 10 | Համակարգչի սեղան | 1 |
| 11 | Քիվ | 8 |
| 12 | Ցուցատախտակ | 2 |
| 13 | Շրջանակ | 16 |
| 14 | Կրակմարիչ | 4 |
| 15 | Հրշեջ վահան | 1 |
| 16 | Ջերմաչափ | 1 |
| 17 | Մոնիտոր | 1 |
| 18 | Անխափան սնուցման սարք | 1 |
| 19 | Բազմաֆունկցիոնալ սարք | 2 |
| 20 | Պրոեկտոր | 1 |
| 21 | Տեսախցիկ | 1 |
| 22 | Եռոտանի վեբ տեսախցիկի համար | 1 |
| 23 | Պրոեկտորի էկրան | 1 |
| 24 | Բարձրախոս | 1 |
| 25 | Խոսափող համակարգչի | 1 |
| 16 | Ծառի սրսկիչ | 1 |
| 27 | Փոշեկուլ | 1 |
| 28 | Սառցարան | 1 |
| 29 | Դաշնամուր | 1 |

***<u>Վերջին 5 տարիների ընթացում ձեռք բերված հիմնական գույքը</u>***

| 2019 | | 2020 | | 2021 | | 2022 | | 2023 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Անվանում** | **Քա նակ** | **Անվա նում** | **Քա նակ** | **Անվա նում** | **Քա նակ** | **Անվա նում** | **Քա նակ** | **Անվա նում** | **Քա նակ** |
| Էլ. ջեռուցիչ | 9 | Էլ.ջեռու ցիչ | 1 | Էլ.ջեռու ցիչ | 7 | Էլ.ջեռու ցիչ | 3 | | |
| | | Ջերմաչ ափ ինֆրակ արմիր | 1 | Ծառի սրսկիչ | 1 | Սառցա րան | 1 | | |
| | | | | Փոշեկուլ | 1 | | | | |
| Գեղարվեստ ական գրականությ | **4** | Գեղարվե ստական գրականու | **5** | Գեղարվես տական գրականու | 20 գիրք նվիրատ | Գեղարվե ստական գրականո | **2** (50 գիրք | Գեղարվե ստական գրականո | 6 (30 գիրք |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ուն | | թյուն | | թյուն | վություն | ւթյուն | նվիր ատվո ւթյուն ) | ւթյուն | աշ. խորհ րդի ներդ րմա մբ ) |

**2.գ . Հաստատության շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան և այլ ռեսուրսները՝ հաշվետու ժամանակաշրջանում**

Դպրոցի ներկայիս շենքն ունի սեյսմակայունության խնդիր, նորոգումը կամ վերակառուցումը քաղաքաշինական նորմերով արգելվում է: Նյութատեխնիկական բազան և այլ ռեսուսները, ներկա շենքային պայմաններին համապատասխան, բավարար են, սակայն անհրաժեշտ քանակով չեն, քանի որ տարածքի խնդիր կա: Եթե տարածքի խնդիրը չլիներ, ապա դպրոցի ֆինանսական միջոցներով հնարավոր կլիներ ամեն տարի համալրել ուսում-նական գույքը: ՀՀ կառավարության ֆինանսավորմամբ <<Ապահով դպրոց>> ծրագրի <<Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում>> միջոցառման շրջանակում Լուսակնի միջնակարգ դպրոցի համար կառուցվում է դպրոցի նոր շենք: Շինարարական աշխատանքները սկսվել են 2020թ նոյեմբերից, և շենքը շահագործման կհանձնվի 2024թ-ին, հետևաբար ներկայիս շենքային պայմանների բարելավման և նյութատեխնիկական բազայի համալրման անհրաժեշտություն չի լինի: Նորակառույց դպրոցը հագեցած կլինի ամբողջովին նոր կահավորմամբ հարմարավետ դասասենյակներով, կգործի լաբորատորիաներ՝ հագեցած նոր սարքավորումներով ու նյութերով, մարզադահլիճ, հանդիսությունների դահլիճ, գրադարան-ընթերցասրահ, համակարգչային կաբինետ, խոհանոց, ճաշարան, լոգարաններ, զուգարաններ ու բացօթյա սպորտհրապարակ: Կգործի նաև նախակրթարան:

***Անվանում և չափաքանակ տարրական դպրոցի ուսումնադիտողական պարագաների և կահավորանքի***

**Անվանումը**

**Քանակը**

1. Գրաֆպրոեկտոր 1 հատ
2. Դիապրոեկտոր 1 հատ
3. Դաշնամուր 1 հատ

4. ՀՀ դրոշ 1 հատ
5. ՀՀ հիմն 1 հատ
6. ՀՀ պետ. և ազգ. ազատագրական շարժման գործիչներ 1 լրակազմ

**ՈՒսումնաօժանդակ նյութեր, սարքեր**

**<< Մայրենի առարկա>>**

1. Տառադարան 1 լրակազմ
2. Շարժական տառեր 1 լրակազմ
3. Տպագիր և ձեռագիր տառերի ցուցադրական քարտեր 1 լրակազմ
4. Պլակատներ 4 լրակազմ
5. Ձեռագործ դիդակտիկ պարագաներ
6. Ուսումնաօժանդակ գրականություն

**<< Ռուսերեն>> , << Անգլերեն>> առարկաներ**

1. Տառադարաններ
2. Թվադարան
3. Տպագիր և ձեռագիր տառերի ցուցադրական քարտեր
4. Պլակատներ
5. Ձեռագործ դիդակտիկ պարագաներ
6. Ուսումնաօժանդակ գրականություն

**<< Մաթեմատիկա>>**

1. Թվադարան
2. Պլակատներ 2 լրակազմ
3. Դասարանային անկյունաքանոն
4. Դասարանային քանոն
5. Դասարանային կարկին
6. Մետր
7. Ուսումնաօժանդակ գրականություն

**Մարզագույք**

օղ( փոքր) - 3 հատ, օղ (մեծ)- 4 հատ

փոքր գնդակ -3 հատ, մեծ գնդակ -2 հատ

ցատկապարան (երկար) -2 հատ, ցատկապարան (կարճ) -2 հատ

դրոշ - 5 հատ, արգելք-8 հատ

բաթմինտոն- 1զույգ ,

դասասենյակային պայմաններին հարմար զարգացնող և մարզող խաղեր

***<u>Անվանացանկ և չափաքանակ հիմնական դպրոցի ուսումնադիտողական պարագաների և ուսումնական կահավորանքի</u>***

<u>Անվանումը</u> <u>Քանակը</u>

<u><< Հանրահաշիվ և երկրաչափություն>> առարկաներ</u>

Պաստառներ- 3 լրակազմ, ձեռագործ դիդակտիկ պարագաներ

**<<Աշխարհագրություն >>առարկա**

քարտեզներ- 2 լրակազմ

գլոբուս 1 հատ

**<<Պատմություն առարկայի>>**

պաստառներ 4 լրակազմ

<u><<Տեխնոլոգիա>> առարկա</u>

Պաստառներ.

Խառատապտուտակահան հաստոցի կառուցվածքը - 1 լրակազմ

Արհեստանոցներում օգտագործվող հաստոցների կառուցվածքը - 1 լրակազմ

Պաստառներ տարբեր նշանակության - 1 լրակազմ

<u><<Կենսաբանություն >> առարկա</u>

Պաստառներ - 1 լրակազմ

<u><<Կերպարվեստ>> առարկա</u>

Պաստառներ 1 լրակազմ, մատիտներ, ջրաներկեր, վրձիններ, գուաշ, թղթեր

**<<Ֆիզկուլտուրա>> առարկա**

Պլակատներ 1լրակազմ

| | |
|---|---|
| Օղեր - 3 հատ, | ֆուտբոլի գնդակ - 2 հատ |
| թիրախ - 5հատ, | փոքր գնդակներ- 5 հատ |
| վոլեյբոլի գնդակ - 1 հատ | շաշկի-1 հատ |
| շախմատ-3 հատ | ցատկապարան-3 հատ |

***<u>Անվանացանկ և չափաքանակ միջնակարգ դպրոցի ուսումնադիտողական պարագաների և ուսումնական կահավորանքի</u>***

| <u>Անվանումը</u> | <u>Քանակը</u> |
|---|---|
| <u><< Հանրահաշիվ և երկրաչափություն>> առարկաներ</u> | |
| Պաստառներ | 1 լրակազմ |
| **<<Ֆիզկուլտուրա>> առարկա** | |
| Պլակատներ | 1 լրակազմ |
| Օղեր | 5 հատ |
| Ֆուտբոլի գնդակ | 1 հատ |
| Թիրախ | 5 հատ |
| Փոքր գնդակներ | 5 հատ |
| Վոլեյբոլի գնդակ | 1 հատ |
| Շախմատ | 1 հատ |
| Դրոշակներ | 3 հատ |
| Թիրախ | 1 հատ |
| Ցատկապարան | 3 հատ |
| Բատմինթոն | 1 զույգ |
| **<<Աշխարհագրություն >>առարկա** | |
| քարտեզներ- | 1լրակազմ |
| գլոբուս | 1 հատ |

***Նոր շենքի գույքային հագեցվածությունը , նախնական պլանավորմամբ, հետևյալը կլինի***.

Ստորև ներկայացնում ենք նոր շենքի գույքի հագեցվածությունը մասնակի՝ համաձայն նախնական պլանավորման (հնարավոր է քանակական փոփոխություն լինի): Գույքացուցակում ներառված չէ լաբորատոր գույքը, սարքավորումներն ու նյութերը, ինչպես նաև խոհանոցի և ճաշարանի գույքը, քանի որ վերջնական ցանկն ու քանակը դեռ որոշված չէ: Ողջ գույքը տրամադրվում է կառավարության ֆինանսավորմամբ: Թեպետ շենքը դեռ պատրաստ չէ շահագործման, բայց մարզագույքը մասնակի, ՏՀՏ միջոցները մասնակի, հանդիսությունների դահլիճի գույքը մասնակի արդեն հատկացվել է: Գույքի տրամադրման գործընթացն այս պահի դրությամբ ընթացքի մեջ է:

| Հ/հ | Անվանացանկ | Քանակ՝ համաձայն դպրոցին հատկացված լիցենզիայի տեղերի |
|---|---|---|
| **Դասասենյակ** | | |
| 1 | Սեղան աշակերտական,բարձրության կարգավորմամբ մեկտեղանի՝ 1-4 դասարանների համար | 15 |
| 2 | Սեղան աշակերտական,բարձրության կարգավորմամբ երկտեղանի՝ 1-4 դասարանների համար | 13 |
| 3 | Սեղան աշակերտական,բարձրության կարգավորմամբ մեկտեղանի՝ 5-12-րդ դասարանների համար | 20 |
| 4 | Սեղան աշակերտական,բարձրության կարգավորմամբ երկտեղանի՝ 5-12-րդ դասարանների համար | 24 |
| 5 | Աթոռ աշակերտական՝ 1-4 դասարանների համար | 46 |
| 6 | Աթոռ աշակերտական՝ 5-12-րդ դասարանների համար | 126 |
| 7 | Ուսուցչի սեղան | 21 |
| 8 | Գրապահարան | 8 |
| 9 | Գրատախտակ | 2 |
| 10 | Գրատախտակ՝ ծալվող | 2 |
| 11 | Կավճամագնիսային,մարկերային գրատախտակ՝ 3-փեղկանի կարճապահարանով | 5 |
| 12 | Պատուհանի շերտավարագույր՝ դպրոցի բոլոր պատուհանների համար<br>Ներկայացված են պատուհանների չափերը | 26x 1.90x2.0<br>9x70x1.30<br>2x1.90x1.60 |

| | | |
|---|---|---|
| | Կարմիրով նշվածները մուտքի և ճաշարանի հատվածում է լինելու | 2x2.80x5.50<br>1x2.25x1.30<br>1x3.70x2.20<br>6x1.70x3.4 |
| 13 | Աշխատանքային աթոռ | 20 |
| 14 | Հագուստի կախիչ | 21 |
| 15 | Քարտեզների համար սեկցիա՝ պատմության և աշխարհագրության դասասենյակների համար | 2 |
| **Հանդիսությունների դահլիճ** | | |
| 1 | Ամբիոն | 2 |
| 2 | Աթոռ դահլիճի համար | 100 կարմիր |
| 3 | Դահլիճի պատուհանների վարագույներ | Պատուհանի չափը 2x2.20x70 |
| 4 | Դահլիճի բեմերի վարագույրների ձեռքբերում և տեղադրում | Ավտոմատ փակվող 1x12x4 |
| **Տնօրենի աշխատասենյակ** | | |
| 1 | Մետաղական պահարան | 1 |
| 2 | Ղեկավարի աթոռ | 1 |
| 3 | Ղեկավարի սեղան՝ դիմադիրով | 1 |
| 4 | Աշխատանքային աթոռ | 10 |
| 5 | Բազմոց՝ երկու բազկաթոռով | 1 |
| 6 | Գրապահարան | 2 |
| 7 | Զգեստապահարան | 1 |
| **Ուսուցչանոց** | | |
| 1 | Աշխատանքային սեղաններ | 6 |
| 2 | Աշխատանքային աթոռ | 20 |
| 3 | Սեղան խորհրդակցությունների համար | 1 |
| 4 | Գրապահարան | 3 |
| 5 | Զգեստապահարան | 2 |
| **Գրադարան** | | |
| 1 | Սեկցիա-ստելաժ | 10 |
| 2 | Գրատախտակ շարժական | 2 |
| 3 | Քարտեզների համար պահարան | 2 |
| 4 | Հագուստի կախիչ | 3 |
| **Մարզադահլիճ** | | |
| 1 | Բարձրացատկի կանգնակ-ձող | 1 |
| 2 | Մարմնամարզական ներքնակ | 10 |
| 3 | Մարմնամարզական կամրջակ | 1 |

| | | |
|---|---|---|
| 4 | Շվեդական պատ | 10 |
| 5 | Մարմնամարզական այծիկ | 1 |
| 6 | Վոլեյբոլի կանգնակ | 1 |
| 7 | Բաստկետբոլի վահանակ օղակով | 1 |
| 8 | Մարմնամարզական նստարան | 4 |
| 9 | Ֆուտբոլի դարպաս՝ ցանցով | 2 |
| 10 | Պտտաձող | 1 |
| 11 | Մագլցման պարան | 1 |
| 12 | Վոլեյբոլի ցանց շարժական | 1 |
| 13 | Օղեր | 25 |
| 14 | Գուրզեր (բուլավա) | 10 |
| 15 | Բասկետբոլի գնդակ | 10 |
| 16 | Վոլեյբոլի գնդակ | 20 |
| 17 | Ֆուտբոլի գնդակ | 20 |
| 18 | Էլեկտրոնային կշեռք | 2 |
| 19 | Հանդերձարանի պահարան | 20 |
| 20 | Հանդերձարանի կախիչ | 6 |
| 21 | Հանդերձարանի հայելի | 4 |
| **Համակարգչային տեխնիկա** | | |
| 1 | Համակարգիչ ամբողջը մեկում՝ (Մոնոբլոկ) | 5 |
| 2 | Անխափան սնուցման աղբյուր (UPS) | 10 |
| 3 | Բազմաֆունկցիոնալ լազերային տպիչ սարք (MultiFunction) | 2 |
| 4 | Wi-Fi Router | 2 |
| 5 | Դյուրակիր համակարգիչ | 5 |
| 6 | Պրոյեկտոր | 3 |
| 7 | 3D տպիչ | 2 |
| **«Շախմատ» առարկայի գույքի ցանկ** | | |
| 1 | Շախմատի ցուցադրական խաղատախտակ՝ խաղաքարերով | 5 |
| 2 | Շախմատի խաղատախտակ խաղաքարերով | 6 |
| 3 | Շախմատի աշակերտական սեղան, բարձրության կարգավորմամբ, 1-4 դասարանների համար | 6 |
| 4 | Աթոռ աշակերտական, 1-4 դասարանների համար | 16 |
| 5 | Շախմատի ժամացույց | 6 |
| **ԲՈՒԺԿԵՏ** | | |
| 1 | Սեղան բժշկական | 1 |
| 2 | Գործիքային սեղան | 1 |
| 3 | Պահարան բժշկական | 1 |
| 4 | Կշեռք բժշկական | 1 |
| 5 | Հասակաչափ | 1 |
| 6 | Աղյուսակ (տեսողությունը որոշելու համար) | 1 |

| | | |
|---|---|---|
| 7 | Երկիարկ տախտամած | 37 |

**«ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ»**

**ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ**

| N | Անվանում | Քանակ՝ համաձայն դպրոցին հատկացված լիցենզիայի տեղերի |
|---|---|---|
| 1 | Ամբիոն | 1 |
| 2 | Չիրկիզվող պահարան | 1 |
| 3 | Ուսումնական զենք (АК 74)՝ յուղման պարագաներով | 2 |
| 4 | Օդամղիչ հրացան | 1 |
| 5 | Ուսումնական նռնակներ (ՌԳԴ-5, ՌԳ-42, Ֆ-1) | 5-ական |
| 6 | Նռնականետ (РПГ-7) | 1 |
| 7 | Մենամարտ վարժասարք | 2 |
| 8 | Կողմնացույց (Ադրիանովի) | 10 |
| 9 | Տեղագրական ուսումնական քարտեզներ | 1-ական լրակազմ |
| 10 | Սեղան զենք մաքրելու համար | 2 |
| 11 | Ուսումնադիդակտիկ ցուցապաստառներ | 1-ական լրակազմ |
| 12 | Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում ազդարարմանը վերաբերող ստենդ | 1 |
| 13 | Ազդարարաման համակարգին | 1-ական |

| | | |
|---|---|---|
| | վերաբերող ստենդներ | |
| 14 | ՔՊ սանիտարական պատգարակ | 10 |
| 15 | Մանեկեններ՝ հագցված անհատական պաշտպանական միջոցներով: | 3 |
| 16 | Քաղաքացիական հակագազ ГП-5. | 70 |
| 17 | Քաղաքացիական հակագազ ГП-9. | 10 |
| 18 | Մանկական հակագազ ПДФ-2ДУ. | 30 |
| 19 | Արդյունաբերական հակագազ **ՊՊՖ-95Մ ՇՄՊ դիմամասով** | 2 |
| 20 | Մեկուսացնող հակագազ ИП-4 | 2 |
| 21 | Ռեսպիրատոր-շնչադիմակ Р-2. | 50 |
| 22 | ОЗК մաշկի պաշտպանական լրակազմ | 5 |
| 23 | Л-1 մաշկի պաշտպանական լրակազմ | 1 |
| 24 | Համազորային պաշտպանական լրակազմ՝ որպես կոմբինեզոն | 1 |
| 25 |  | 1 |
| 26 | ДП-5в ռենտգենմետր | 1 |
| 27 | ԻԴ-1 լրակազմ | 1 |
| 28 | ВПХР քիմիական հետախուզության սարք | 1 |

***<u>2.դ Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները</u>***

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվել են խորհրդակցական հետևյալ մարմինները.

- Կոլեգիալ կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը
- Մանկավարժական խորհուրդը
- Ծնողական խորհուրդը
- Աշակերտական խորհուրդը
- Առարկայակամ մեթոդական միավորումներ

***Կառավարման խորհուրդ***

Լուսակնի միջնակարգ դպրոցի կառավարման խորհուրդն առանձին չէ, այն ձևավորվել է որպես երեք հաստատության միացյալ խորհուրդ, որը բաղկացած է 19 անդամից: Խորհրդի կազմը ձևավորվել է 2021թ մայիսի 24 –ին: Խորհրդի նիստերը գումարվում են հաստատության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում և դեպքերում՝ ըստ խորհրդի կողմից հաստատված ժամա- նակացույցի, ինչպես նաև խորհրդի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ, լիազորված մարմնի, հաստատության տնօրենի կամ խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

Դպրոցի կառավարման խորհուրդը գործում է կանոնադրությամբ սահմանված պահանջներին, ինչպես նաև լիազոր մարմնի կողմից հաստատված կարգերին համապատասխան: Միացյալ կառավարման խորհուրդը բաղկացած է 19 անդամից, ովքեր պարտաճանաչորեն մասնակցում են հրավիրված բոլոր նիստերին: Նիստերն ընթանում են ակտիվ, անկաշկանդ ու առողջ քննարկումների մթնոլորտում: Խորհրդի բոլոր անդամներն էլ դպրոցների կայացման, դպրոցաշինության, կրթության բարձր մակարդակի ապահովման նկատմամբ ունեն սրտացավ ու հոգատար վերաբերմունք: Հետամուտ են կայացրած որոշումների իրագործմանը, մշտապես ցուցաբերում են նախաձեռնողականություն :

**2018թ դեկտեմբերի 27-ին հաստատության դեռևս առանձին խորհուրդը ընտրել է տնօրեն և կատարել է իր կանոնադրական պարտականությունները՝ մասնավորապես հաշվետու ժամանակաշրջանում :**

- **Իրականացրել** է տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն,
- **Արձանագրվել** են հերթական և արտահերթ բոլոր նիստերը,
- **Հաստատել է** դպրոցի ներքին կարգապահական կանոնները,

- Հաշվետու ժամանակահատվածում տնօրենի կողմից **քննարկման** է ներկայացվել դպրոցի ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունները, ներքին գնահատման արդյունքները, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և բյուջետային ֆինանսավորման մասին հայտը,
- Տնօրենի ներկայացմամբ խորհրդի **հավանությանն է** արժանացել դպրոցի տարիֆիկացիաները, հաստիքային ցուցակներն ու ամենամյա ծախսերի նախահաշիվը և ներկայացվել համապատասխան լիազորված մարմնին,
- Տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա **վերահսկել է** դպրոցի զարգացման ծրագրի կատարումը
- Սահմանված ժամկետներում **հաստատել է** իր աշխատակարգը և **ընտրել** խորհրդի նախագահ,
- Տնօրենի ներկայացմամբ **քննարկման և հավանության** է արժանացել հաստատության աշխատողների խրախուսման հարցը,
- Նոր գույքի ձեռք բերման հարցում միշտ ***նախաձեռնող և աջակցող*** է եղել,
- Ս**ահմանել է** պակաս խտությամբ դասարան բացելու հարցը,
- Բարեխղճորեն է **վարում և պահպանում** նիստերի արձանագրությունները:

*<u>Մանկավարժական խորհուրդ - 18 անդամ</u>*

***<<Կրթել մարդուն, որ բոլոր էակներից անհնազանդն է և ամենաբարդը, արվեստների արվեստն է>>*** ***<u>Գրիգոր Նազիանզացի</u>***

Մանկավարժական խորհուրդը գործում է Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ, այլ իրավական ակտերով:

Լուսակնի միջնակարգ դպրոցի մանկավարժական խորհուրդը բաղկացած է 18 անդամից: Մանկավարժական խորհրդի կազմի մեջ են մտնում դպրոցի բոլոր մանկավարժները, գրադարանավարը, ծնողական խորհրդի նախագահը: Անհրաժեշտության դեպքում մանկավարժական խորհրդի նիստերին մասնակցելու համար խորհրդակցական ձայնի իրավունքով հրավիրվում են ծնողներ, աշակերտական խորհրդի ներկայացուցիչներ (սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ):

Նիստերի կայացման օրերի և օրակարգի մասին խորհրդի անդամները պատշաճ կերպով իրազեկվում են: Եղել են դեպքեր, երբ մանկավարժական

խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կատարվել են փոփոխություններ: Բոլոր որոշումներն ընդունվում են ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ և պարտադիր են դպրոցի բոլոր աշխատողների համար: Սահմանված պահանջներին համապատասխան քննարկվում են ուսուցման որակի և արդյունավետության բարձրացմանը միտված հարցեր, տնօրինության հաշվետվությունները և մ/մ աշխատանքների արդյունքները: Բանավոր հարցումների, գործնական աշխատանքների, թեմատիկ աշխատանքների նվազագույն թիվը կիսամյակի ընթացքում նույնպես սահմանվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ: Հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխումը կատարվում է մանկավարժական խորհրդի որոշմամբ՝ հաշվի առնելով խորհրդի յուրաքանչյուր անդամի կարծիքը: Մանկավարժական խորհրդի յուրաքանչյուր անդամ գիտի և հստակ պատկերացնում է իր իրավունքներն ու պարտականությունները, ունակ է որոշումներ կայացնել, պատասխան տալ դրանց համար: Մանկավարժական խորհուրդը անառարկելիորեն խրախուսում է ուսուցիչների նորարարական և ինքնուրույն աշխատանքները: Ուսուցիչներն ազատորեն արտահայտում են իրենց գաղափարներն ու առաջարկությունները, քննարկումներն անցնում են ազատ ու անկաշկանդ: Արդի փոփոխություններին ընդառաջ հիմնախնդիրները մեզ մոտ դիտարկում են որպես մարտահրավեր, այլ ոչ թե աղետ: Մանկավարժական կոլեկտիվում առկա է համագործակցային ոգին: Կարևոր որոշումների կայացման հարցում կարևորվում է ուսուցիչների կարծիքը: Բոլորի նպատակը մեկն է՝ բարելավել իրենց մասնագիտական որակները ինքնակրթության, ինքնազարգացման, վերապատրաստումների, մանկավարժական քննարկումների միջոցով՝ աշակերտների բազմակողմանի զարգացման, կրթության ու առաջադիմության առաջընթացի բարձր մակարդակ ապահովելու համար: Մանկավարժական կոլեկտիվում նոր համալրումները բարյացակամ ընդունելության են արժանանում և կարևորվում է մասնագիտական կոմպետենտությունը.

- որակավորման բարձր մակարդակ,
- տվյալ ոլորտում գործելու իրավասություն,
- մասնագետի կրթվածության մակարդակ,
- կատարողական վարպետություն,
- ընդհանուր-մշակութային կոմպետենտության բաղադրամաս:

Ներառականության ներդրման հարցում մանկավարժական խորհուրդն առավել քան միասնական է, ցանկացած խնդրահարույց միջադեպ, իրավիճակ իր հանգուցալուծումն է գտնում համագործակցային աշխատանքի շնորհիվ, ինչի արդյունքում Լուսակնի միջնակարգ դպրոցում՝

1.անհատական ուսումնական պլանները մշակվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշչի և առարկայական ծրագրերի՝ հաշվի առնելով սովորողի կարիքները, ընդունակությունները, հնարավորություն-ները, ձեռքբերումները և առաջընթացը,

2.բոլոր ուսուցիչներն ունեն դրական դիրքորոշում ներառական կրթության նկատմամբ,

3.ուսուցիչները գիտակցում են ներառական կրթության վերաբերյալ կարծրատիպերի առկայությունը, դրանց վերացման անհրաժեշտությունը և ձեռնարկում են համապատասխան քայլեր,

4.ուսուցիչներն ունեն հավասար վերաբերմունք բոլոր երեխաների նկատմամբ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից և նրանց առանձնահատուկ կարիքներից,

5.ուսուցիչները կարողանում են հայտնաբերել կարծրատիպեր ամրապնդող վարքագիծ կամ երևույթ դասարանում, դպրոցում, ուսումնական նյութերում և նույնիսկ սեփական վարքագծում:

Լուսակնի միջնակարգ դպրոցի ուրաքանչյուր ուսուցչի բարեխիղճ և համակողմանի աշխատանքով է պայմանավորված դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, երեխաների արժեքային համակարգի ձևավորումը, մարդկային բարձր որակների ապահովումը: Լուսակնի միջնակարգ դպրոցի յուրաքանչյուր ուսուցիչ, անկախ դասավանդած առարկայից, իր առջև դնում է մի շարք խնդիրներ՝ աշակերտների բարոյական դաստիարակությունից մինչև համամարդկային բարձր արժեքների ձևավորումը, աշակերտին՝ իբրև անհատ և քաղաքացի ձևավորելը և այս բարդ խնդիրների լուծումներն իրականանում են ուսումնական առարկաների ուսուցման, դասղեկական ժամերի, արտադասա-րանական և արտադպրոցական միջոցառումների ընթացքում: Լուսակնի միջնակարգ դպրոցում ուսուցման գործընթացում ցանկալի արդյունքն ապահովվում է մեր բանիմաց ուսուցիչների մասնագիտական կարողութ-յունների, դասավանդման մեթոդների իմացության, մանկավարժական տակտի, բարդ իրադրություններում զուսպ լինելու, անաչառ վերաբերմունքի, նրբանկատության, համբերատարության շնորհիվ:

Իր գործին նվիրված յուրաքանչյուր ուսուցիչ իր գործունեության ողջ ընթացքում, իրավմամբ, կարիք ունի գնահատանքի: Ուսուցչի ճիշտ և արդար արժևորումը, հարգական վերաբերմունքը նրա անձի ու գործունեության նկատմամբ նաև արդյունավետ աշխատանք իրականացնելու խթան է: Ուսուցչի անկողմնակալ արժևորումը ավելի է ամրապնդում նրա դիրքը, բարձրացնում հեղինակությունը ծնողական, աշակերտական հանրույթի, գործընկերների, ինչպես նաև տվյալ հասարակության շրջանակներում: Մեր դպրոցում

մանկավարժական յուրաքանչյուր ձեռքբերում արժանանում է *խրախուսանքի*՝ գովեստ, շնորհակալագիր, ձեռքբերման մասին տեղական թերթում հրապարակումներ, լրավճարներ՝ խորհրդի համաձայնությամբ: Այստեղ արժևորումը, ճանաչումը և գովեստը հիմնավորված է ու հասկանալի բոլորին, արդար՝ այլոց նկատմամբ:

## *Ծնողական խորհուրդ- 9 անդամ*

Լուսակնի միջնակարգ դպրոցի ծնողական խորհուրդը գործում է հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով: Դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան իր կազմից առաջադրել է խորհրդի անդամության երկու թեկնածուի, ովքեր բարեխղճորեն մասնակցում են խորհրդի նիստերին: Յուրաքանչյուր ուսումնական տարի իր կազմից ընտրում է ծնողական խորհրդի նախագահի, ում լիազորությունները սահմանվում են մեկ ուսումնական տարի ժամկետով: Իր լիազորությունների սահմաններում ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը: Եղել են դեպքեր, երբ դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացվել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում ցուցաբերվել է աջակցություն: Խորհրդի կողմից հետաքրքրություն է ցուցաբերվում դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի նկատմամբ: Ծնողներին հետաքրքրող հարցերի պատասխաններն ու պարզաբանումները անպատասխան չեն մնում: Ծնողական խորհրդի ներկայացուցիչները երկազգ են՝ հայեր և եզդիներ: Կանոնավոր կերպով գումարվում են ծնողական խորհրդի նիստերը՝ պահպանելով քանակն ու անհրաժեշտությունը: Նիստերին գրեթե միշտ լինում են բացակայող ծնողներ՝ պայմանավորված գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվածությամբ: Շատ ծնողներ դժվարանում են երեխայի դասապատրաստմանը օգնություն ցուցաբերել, ոչ բոլորն են կարողանում երեխայի հետ այցելել թանգարան, գրադարան, թատրոն, տնային ընթերցանության հարցում կա հետևողականության պակաս: Այս ամենը պայմանավորված է ծնողների կրթական ցածր ցենզով, սոցիալական անբավարար վիճակով, ինչպես նաև հետաքրքրությունների պակասով ու տարբերությամբ: Ցավալի է, բայց կան ծնողներ, ովքեր նույնիսկ տառաճանաչ չեն: Այս պարագայում ուսուցիչների գործն ավելի է բարդանում: Ծնող-ուսուցիչ հարաբերությունները ոչ բոլոր դեպքերում են ստացվում, մակարդակների տարբերությունը խիստ շոշափելի է:

Սովորողի շահերն առաջնային համարելով՝ ուսուցիչները ծնողներին վերաբերվում են որպես երեխայի կրթական հարցում իրենց գործընկերների և համագործակիցների: Ջանում են սեփական օրինակով փոխել ծնողներին, դրական օրինակ լինել նրանց համար: ՈՒսուցիչների ջանքերը նպատակաուղղված են ծնողի դրական վերաբերմունքի ձևավորմանը՝ դպրոցի և սեփական անձի նկատմամբ: Ճանաչողական նպատակով հաճախ է կազմակերպվել <<Դպրոցի և ընտանիքի դերը աշակերտների դաստիա-րակության գործում>>, <<Ինչպես օգնել երեխային սովորել>>, <<Դպրոցում երեխայի հաջողություններն ու խնդիրները>>, <<Իմ իրավունքներն ու պարտականությունները>>, <<Ինչպես կանխարգելել բուլինգը>> և այլ թեմաներով քննարկումներ ու խորհրդա-տվություններ: Փոխհամագործակցության, իրազեկ-վածության մակարդակի բարձրացման նպատակով շարունակական բնույթ են կրելու նմանատիպ հանդիպումները: Մեր դպրոցում ցանկացած մանկավարժի արհեստավարժության բարձր ցուցանիշ է համարվում նաև իր աշակերտների բոլոր ծնողների հանդեպ հարգալից վերաբերմունք ցուցաբերելը: Առանձին դեպքերում, դա երբեմն լինում է արտասովոր դժվար: Բայց անհրաժեշտ է կառուցողական լինել, քանի որ առանց հասկանալու, հարգելու և համագործակցելու ծնողի հետ, անհնար է իրականացնել երեխայի դաստիարակությունը դպրոցում: Ծնողներին տրված է հնարավորություն հետևել երեխայի ուսումնառությանը ուսումնական հաստատությունում, մասնակցել դասալսումներին: Չնայած հոգսերին ու վերը նշված խնդիրներին՝ ծնողների կողմից երեխաների նկատմամբ կա հոգածություն, ուշադրություն, որակյալ կրթության ապահովման համար մտահոգություն: Տարբեր միջոցառումներին պատրաստակամ են անձնական աշխատուժով, նյութով աջակցելուն:

Կարևոր է ծնողների մշտական կապը ուսումնական հաստատության հետ՝ ծնողական ժողովներին կանոնավոր մասնակցությունը, երեխայի բացակա-յությունների, առաջադիմության, հաջողությունների և խնդիրների վերաբերյալ տեղեկացված լինելու և նրան աջակցելու համար:

Ցավոք սրտի ծնողական հանրույթը լիարժեք օգնություն և ներդրումներ չի կարողանում կատարել: Դպրոցը շահագրգռված է ծնողների ներգրավվածության մեծացման ուղղությամբ և, հետևաբար, ուղիներ ենք փնտրում ծնողներին դպրոցական համայնքին կապելու համար: Երբ ծնողը ներգրավված է այս գործում, շահում է աշակերտը, դպրոցը, համայնքը;

***<u>Աշակերտական խորհուրդ- 5 անդամ</u>***

Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը: Հաստատության սովորողների ինքնավարության

բարձրագույն մարմինը հաստատության 6-12-րդ դասարանների սովորողների **ընդհանուր ժողովն** է: Հաստատության ընդհանուր ժողովը՝

1.հաստատել է սովորողների ինքնավարության մարմնի կանոնադրությունը և դրանում կատարում փոփոխություններ,

2.ի գիտություն է ընդունել հաստատության գործունեության վերաբերյալ տնօրենի ամենամյա ծրագրային ուղերձը,

3.քննարկել է աշակերտական խորհրդի և նրա նախագահի տարեկան հաշվետվությունները և բաց քվեարկության միջոցով տրվել համապատասխան գնահատական (անբավարար, բավարար, լավ)

4.քննարկվել է տնօրենի կամ դասղեկների հաղորդումը ուսումնական տարվա ընթացքում արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման մասին,

5.պարբերաբար քննարկվում է աշակերտական խորհրդի կանոնադրությամբ իր լիազորությունների սահմաններում նախատեսված այլ հարցեր և ընդունվում համապատասխան որոշումներ, որոնց կատարումը պարտադիր է աշակերտական խորհրդի համար:

Լուսակնի միջնակարգ դպրոցի աշակերտական խորհուրդը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ հաստատության և իր կանոնադրությամբ: Աշակերտական խորհուրդը ստեղծվել է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ձևավորվում է աշակերտական նոր խորհուրդ: Աշակերտական խորհուրդը բաղկացած է 5 անդամից: Աշակերտները մեծ ոգևորվածությամբ ու ակտիվությամբ են մասնակցում ու հետևում խորհրդի գործունեությանը: Մշտապես հանդես են գալիս խելամիտ ու արդյունավետ նախաձեռնություններով: Համագործակցությունը տնօրինության հետ սերտ է: Լուսակնի միջնակարգ դպրոցում գործում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան աշակերտական խորհուրդ, որի ներկայացրած առաջարկություններն ամբողջությամբ արտացոլում են սովորողների կարիքները: Ուսումնական հաստատության աշակերտական խորհուրդն իր գործունեությունը կառուցում է փոխադարձ հարգանքի, սովորողների, ծնողների և տնօրինության փոխադարձ վստահության ու

աջակցության մթնոլորտում, իրականացնում է հանրօգուտ աշխատանք: Ցանկացած խելամիտ նախաձեռնություն տնօրինության կողմից արժանանում է մեծ ուշադրության ու աջակցության: Ուսուցիչ – աշակերտ հարաբերություններում ձևավորված է փոխադարձ հարգալից, ինչպես նաև ընկերական վերաբերմունք: Այսպիսի անկաշկանդ հարաբերությունների միջավայրում մեր դպրոցում գրեթե բացառված են բուլինգի դեպքերը: Աշակերտական խորհրդի ավագ անդամներն ամեն տարի բուլինգի կանխարգելման նպատակով տեղեկատվական միջոցառումներ են կազմակերպում՝ կրտսեր ընկերներին ծանոթացնում երևույթին ու դրա վտանգավոր հետևանքներին: Հոգատար ու սրտացավ վերաբերմունք են ցուցաբերում կրտսեր ընկերների նկատմամբ, սեփական օրինակը օրինակ դարձնում նրանց համար՝ ծեծ, հեգնանք, ծաղր, անվստահություն՝ բուլինգի նման այլ երևույթներ բացառելու նպատակով: Աշակերտներն իրենց կամարտահայտման մեջ ազատ են: Աշակերտական խորհրդի նիստերին հանդես են գալիս համարձակ գաղափարներով ու նախաձեռնություններով, որոնք, հաճախ, քննարկվում են մանկավարժական խորհրդի նիստերին: Ուսուցիչների անմիջական վերահսկողությամբ կազմակերպում են բազմաբովանդակ միջոցառումներ: Թեմատիկան հիմնականում հայրենիքն է, հայրենասիրություն, ազգային մշակութային արժեքները, ազգային, եկեղեցական տոները, ինչպես նաև ըստ դասավանդվող առարկաների: Միջոցառումներն իրականացվում են ճանաչողական էքսկուրսիաների, բանավեճ-քննարկումների, ճանաչողական ցերեկույթ-ներկայացումների, այցելությունների, զեկույցների, հանդիպումներ անվանի մարդկանց հետ, կլոր սեղաններ, պաստառների և սահիկահանդեսների պատրաստմամբ, ռազմամարզական խաղերի և վիկտորինաների միջոցով: Անգլերեն առարկայից պատրաստած պաստառով ավագ դասարանների աշակերտները 2022 թվականին մասնակցեցին <<Հետազոտենք և բացահայտենք աշխարհը>> խորագրով աշակերտական աշխատաժողովին: Աշխատաժողովին ներկայացել էին նաև 2 շարադրությամբ: Առաջին աշխատաժողովին Արագածոտնի մարզից մասնակցության հայտ միայն Լուսակնի միջնակարգ դպրոցից էր ներկայացվել: Երկրորդ աշխատաժողովին՝ մաթեմատիկա և տեխնոլոգիա ինտեգրված առարկաներից՝ նախագծային աշխատանքով: Աշակերտական խորհրդի միջոցներով և ջանքերով դպրոցի գրադարանի ֆոնդը համալրվեց հայ դասական գրականության 30 կտոր գրքերով: Հաշվետու ժամանակահատվածում աշակերտական խորհրդի ամենատպավորիչ, հուզիչ ու խոսուն առաջարկությունը, որն իրագործվեց մանկավարժական աշխատողների անմիջական միջոցներով ու ջանքերով, 44-օրյա պատերազմի ժամանակ Թալինի տարածաշրջանի հերոսացած բոլոր հայորդիների ծնողներին ու այրիներին մարտի 8-ին որդիական շնորհավորանք հղելն էր՝ շնորհավորական բացիկներ անձնապես նրանց հանձնելով: 2023թ հունվարին հանդես եկան <<Մի նամակ, մի ծանրոց>> նախաձեռնությամբ: Նախաձեռնությունը աջակցության արժանացավ տնօրինության կողմից: Համատեղ ջանքերի շնորհիվ աշակերտների նամակներն ու ծանրոցները հունվարի 28-ին արդեն հասել էին

ՀՀ պաշտպանական դիրքեր՝ Զինվորներին: Նմանատիպ մի միջոցառում էլ կազմակերպեցին՝ այս անգամ արդեն գյուղի միակ զինծառայողին մեծարելու նպատակով: Լավագույն ձեռքբերումների, նվիրվածության ու առաջադիմության համար աշակերտները մշտապես խրախուսվում են և արժանանում գովեստի:

***<u>Առարկայական մեթոդական միավորումներ</u>***

Լուսակնի միջնակարգ դպրոցի առարկայական մեթոդական միավորումները գործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ հաստատության կանոնադրությամբ *:*

Դպրոցում գործում են հետևյալ մեթոդական միավորումներ՝

*1. Հումանիտար և լեզուների մ/մ*

*2. Բնագիտամաթեմատիկական առարկաների մ/մ*

*3. Տարրական դասարանների մ/մ*

Մեթոդական միավորումները պարտաճանաչորեն և ակտիվ գործունեությամբ իրականացնում են հաստատության կանոնադրությամբ իրենց վերապահված գործառույթները:

Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են սահմանված ժամանակացույցին համապատասխան: Մեթոդական միավորումների նիստերին քննարկվել են.

- հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տրվել երաշխավորություններ,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսումնական պլանը,
- հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխումը:

Նիստերի ժամանակ մեթոդական միավորումների անդամները անկաշկանդ արտահայտվում են, ազատ են դասավանդման մեթոդների, հնարների ու միջոցների կիրառման հարցում, օգտագործում են կրթության կառավարման պետական լիազոր մարմնի կողմից երաշխավորված գրականությունը, ինչպես նաև ազատորեն ներկայացնում են առաջարկություններ ու դիտողություններ չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի բարելավման վերաբերյալ: Կազմակերպվում են սեմինարներ, մանկավարժական-մեթոդական

ընթերցումներ, խորհրդակցություններ, խորհրդատվություններ: Ողջունելի է նրանց ձգտումը տարակարգ ձեռք բերելու առումով: Բոլոր ուսուցիչները քաջատեղյակ են իրենց իրավունքներին ու պարտականություններին: Մեթոդական միավորումները ջանք չեն խնայում, որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ կարողանա պետական կրթական ծրագրի պահանջներին համապատասխան ապահովի ուսումնական առարկաների չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների ու հմտությունների պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով ուսումնական առավել արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ: Ելնելով մեր դպրոցի դասարանների և աշակերտների քանակից՝ դիտարկվել, քննարկվել և կիրառվում են դասավանդման արդի 20-25 մեթոդ: Դիտարկման և բացահայտման են արժանանում սովորողների առաջադիմությանը նպաստող կամ խոչընդոտող գործոնները: Քննության է արժանացել նաև սովորողների գնահատմանը ներկայացվող նոր չափորոշչային պահանջները՝ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված գնահատման ձևերին համապատասխան մեթոդներ: Մենթոր դպրոցի հետ համագործակցության ժամանակ նիստերին հեռավար մասնակցել են նաև մենթոր դպրոցի ուսուցիչները Teams հարթակի միջոցով: Իրականացվել է նաև փոխադարձ դասալսումներ:

## 2.ե. Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթական կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Լուսակնի միջնակարգ դպրոցը գյուղի միակ դպրոցն է, հետևաբար այն նաև մշակութային ռեսուրսների, մշակութային լուսավորչական կենտրոն է: Դպրոցի հիմքում դրված է դպրոց-ընտանիք- համայնք, ընտանիք-դպրոց-համայնք կապերի ամրապնդումը և անհրաժեշտ է վերոնշյալ բոլոր օղակների առավել արդյունավետ, փոխշահավետ, բարիդրացիական համագործակցության կազմակերպումը: Ծնող, ընտանիք, մանկավարժ և համայնք միասնաբար – սա այն լավագույն համագործակցությունն է, որը կարող է ապահովել բոլոր աշակերտների համար անհրաժեշտ աջակցության տրամադրումը՝ ուսման և կյանքի մեջ հաջողությունների հասնելու նպատակով: Ծնողների, ընտանիքի և համայնքի մասնակցությունը համարվում է ուսումնական հաստատության գործունեության բարելավման կարևոր գործոն:

Լուսակնի միջնակարգ դպրոցը մշտապես համագործակցում է Արագածոտնի մարզպետարանի, Թալինի համայնքապետարանի, Լուսակնի վարչական տարածքի, ԿԶՆԱԿ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի հետ: Համատեղ ջանքերն ուղղված են կրթության որակի բարելավմանը, դպրոցահասակ երեխաների ընդգրկվածությանը դպրոց, սովորողների համար ապահով ու

բարեկեցիկ միջավայրի ստեղծմանն ու պահպանմանը, մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների կատարելագործմանը, համայնքի կարիքների բավարարմանը: Ուսումնական հաստատությունն ու համայնքը համագործակցում են՝ ելնելով համատեղ շահերից և նպատակներից: Համայնքի հետ համագործակցության շնորհիվ վերջնականապես լուծվեց պարտուսից դուրս մնացած սովորողների հարցը: Լինելով գյուղի միակ ուսումնական հաստատությունը՝ հաստատությունը վարում է ակտիվ հասարակական կյանք: Համայնքնային հիմնախնդիրների վերաբերյալ սովորողները միշտ տեղեկացված են և անհրաժեշտության դեպքում իրենց մասնակցությունն են ունենում: Գրեթե բոլոր աշակերտներն ու աշխատողները մասնակցում են շաբաթօրյակներին, համայնքային ծառատունկերին:

## 2.գ. Հաստատության ուսումնական միջավայրը

Լուսակնի միջնակարգ դպրոցը սովորողի համար այն միջավայրն է, որտեղ նա զգում է իր մասնակցության և անձի կարևորությունը: Ուսուցման հիմքում ընկած են սովորողների առաջնորդական կարողությունների ուսուցումն ու կատարելագործումը՝ որպես քաղաքացիական կրթության կարևոր բաղադրիչներից մեկը: Մենք գտնում ենք, որ կրթության ոլորտում առաջնորդ լինել՝ նշանակում է երբեք չդադարել ինքնակրթվել. որպեսզի մեր երեխաներն ավելի լավ կրթություն ստանան, մեզ պետք են ավելի լավ աշխարհ, ավելի լավ ժողովրդավարություն և մարդու իրավունքներ: Այստեղ յուրաքանչյուրն իր ներդրումն է անում, հոգ է տանում, խնամում է, կրթվում է, և այս ամենն իրականացվում է բարյացակամության և փոխօգնության մթնոլորտում, որը նպաստում է ոչ միայն նոր գիտելիք ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը, այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի: Այստեղ ուսուցումը նաև աշխատանքային գործընթաց է: Նման գործելաոճն ու ներկայիս ֆիզիկական պայմանները նպաստում են սովորողների աշխատանքային դաստիարակությանը, համախմբվածությանն ու ընկերասիրությանը: Թեպետ դպրոցի ֆիզիկական միջավայրը չի համապատասխանում ժամանակակից կրթության պահանջներին, սակայն կրթության ոլորտի բոլոր շահառու կողմերի միասնական ջանքերի շնորհիվ փորձում ենք արդյունավետ ելքեր գտնել մեր առջև դրված խնդիրները լուծելու համար: ՈՒսուցիչների մասնագիտական որակի կատարելագործման և արդի դասա-վանդման մեթոդներին տիրապետելու նպատակով ուսուցիչները մշտապես մասնակցում են տարաբնույթ վերապատրաստումների, սեմինարների, վեբի-նարների: Աշակերտ- ուսուցիչ համագործակցությունը սերտ է, անմիջական ու

ջերմ: Սովորողը ուսման ակտիվ մասնակիցն է: Դասապրոցեսը, և ընդհանրապես, ուսուցման գործընթացը, ձանձրալի չդարձնելու համար մշտապես կիրառվում է փոխներգործուն մեթոդներ՝ հարմարեցված մեր պայմաններին ու հնարավորություններին: Դպրոցում արգելված է աշակերտի կողմից բջջային հեռախոսների օգտագործումը, բացառությամբ հեռավար ուսուցման ու խիստ անհրաժեշտության դեպքերի, ինչն էլ չի շեղում աշակերտի ուշադրությունը, բացառում է տեխնիկայի բացասական ազդեցությունը աշակերտի առողջության վրա: Դպրոցում երբևէ չի գրանցվել ալկոհոլի կամ ծխախոտի օգտագործման դեպքեր, գրեթե *բացառված են* բռնության դեպքերը և հոգեբանական ճնշումները: Փոքրաքանակ աշակերտներով համալրված լինելու մեր դպրոցի այս առանձնահատկության շնորհիվ այն ունի մի շարք առավելություններ սովորական դպրոցի համեմատ: Օրինակ, ուսուցիչները քաջատեղյակ են յուրաքանչյուր աշակերտի անհատական կարողություններին, ունակություններին, բնավորության գծերին, կենսապայմաններին: Հնարավորություն ունեն համագործակցելու աշակերտների ընտանիքների հետ: Կարող են անհատական դաստիարակչական աշխատանք իրականացնել հինգ, երեք, երկու, անգամ մեկ հոգանոց դասարանում, ավելի լավ ուսումնասիրել երեխաների անհատական առանձնահատկությունները: Այսպիսի միջավայրում, բնական է, բացասական երևույթներն ու գործողությունները վերահսկելի են ու կանխվում են: Լուսակնի միջնակարգ դպրոցի յուրաքանչյուր աշխատող քաջ գիտակցում է, որ երեխայի կյանքում եղած ցանկացած երևույթ, լինի դրական, թե բացասական, մեծ ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի որակի վրա, ուստի ջանք չենք խնայում կանխել բուլինգի դրսևորումները և սովորողներին զերծ պահում ֆիզիկական ու հոգեբանական ճնշումներից: Չափազանց զգուշավոր ենք դեռահասների հետ աշխատելիս, քանզի հասկանում ենք տարիքային խնդիրները և դպրոցական բուլինգի վտանգավոր հետևանքները, որովհետև այդ տարիքում մարդը փնտրում է կյանքի իմաստները, իր ճանապարհը, ինքն իրեն: Բուլինգի կանխարգելման նպատակով մեր ուսուցիչները մշտապես.

- դպրոցում կազմակերպում են բաց դասեր, իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում սովորողներին և նրանց ծնողներին մանրամասն ծանոթացնում են երևույթին,
- դասղեկի ժամերին, ուղղակի կամ անուղղակի, անդրադառնում են խնդրին, քննարկում երևույթը, խոսում դրա վատ հետևանքների մասին,

- երբ բուլինգ ենք նկատում, լսում ենք բոլոր կողմերին, քննարկում արարքը, լրացուցիչ դաստիարակչական աշխատանք տանում և՛ բուլերի և՛ զոհի հետ՝ համագործակցելով նրանց ծնողների հետ:

Բոլորիս ձգտումն է, ինչպես նաև աշխատանքային սկզբունքը, որ ուսումնական միջավայրը մշտապես լինի բազմանպատակ, համագործակցային, խթանող ու թափանցիկ: Սովորողները հնարավորություն ունեն անհատական, փոքր ու մեծ խմբերով, հատկապես բազմահամակազմ դասարանների սովորողները, աշխատելու, ինչն էլ բարձրացնում է հետաքրքրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ և մոտիվացնում սովորողներին: Խրախուսվում է նաև աշակերտ-աշակերտ աշխատելու սկզբունքը, որը շատ հաճախ կիրառվում է բազմահամակազմ դասարաններում: Ուսումնական դասասենյակային միջավայրը փոխելու համար կազմակերպվում են ճանաչողական էքսկուրսիաներ, այցեր մշակութային հաստատություններ, դասեր բնության գրկում: Ներկա դրությամբ դպրոցում գործում է <<Երգեցողություն >> , <<Юный филолог>> և <<Զարմանահրաշ մաթեմատիկա>> խմբակները: Նոր շենքի շահագործումից հետո նախատեսում ենք ունենալ ձեռագործության, գորգագործության, սպորտային և պարային խմբակներ: Եթե լիներ շենքային բավարար պայմաններ, ապա գեղագիտական դաստիարակությանը նպաստող խմբակներն ավելի վաղ կգործեին :

## 2. է. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումների մշակման ընթացքում ղեկավարվել ենք ՀՀ կառավարության որոշման պահանջներով:

Ներկայումս հանրապետության հանրակրթական դպրոցներում իրականացվում են բազմաթիվ բարեփոխումներ: Կրթական համակարգի բարեփոխումների կենտրոնում ուսուցիչն է՝ որպես փոփոխությունների անմիջական կրող և իրականացնող: Հետևաբար խիստ կարևորում ենք ուսուցչի շարունակական մասնագիտական զարգացումը, դասավանդման մեջ առկա հիմնախնդիրների լուծման համար նոր մոտեցումների մշակումն ու ներդրումը, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը: Մեր ժամանակներում, երբ տեղի է ունենում տեխնոլոգիաների անընդմեջ զարգացում, մանկավարժի համար բավարար չեն ավանդական գիտելիքները, գիտությունների հիմունքներին առնչվող կարողություններն ու

հմտությունները: Մեր գերակա խնդիրներից է շարունակական բնույթ կրող վերապատրաստումների, ինքնակրթության ու ինքնազարգացման միջոցով գրանցել այնպիսի արդյունք, որ մանկավարժների մոտ չնվազի մասնա-գիտական կենսունակությունը: Շարունակական կրթության և որակի ապա-հովման նպատակով մեր ուսուցիչները հաճախ են անդրադարձ կատարում սեփական կրթականին: Համատեղ քննարկումների, վերլուծությունների շնորհիվ կարողանում են գնահատել և հասկանալ սեփական կրթական կարիքները, թե որ որակները կատարելագործման կարիք ունեն, ինչն է անհրաժեշտ փոխել, ինչպիսի որակներ են բացակայում, ինչպիսիք դեռ ձևավորված չեն: Հետևաբար՝ մեր առաջնային նպատակն է.

- գնահատել ուսուցչի մասնագիտական կատարելագործման կարիքը,
- մանկավարժական գործունեության ընթացքում գիտելիքների կանոնավոր լրացման, խորացման համար ինչպիսի աջակցություն է հարկավոր,
- աջակցել դասապրոցեսում կիրառվող արդի մեթոդների յուրացմանը,
- նոր չափորոշչային պահանջների բավարարմանն ուղղված դժվարությունների բացահայտում, կանխում, համապատասխան աջակցության տրամադրում,
- նպատակամետ ուսուցման ապահովում,
- ճկուն և ստեղծագործաբար արձագանք տեղի ունեցող փոփոխություններին,
- համակարգչային սարքավորումներից օգտվելու հմտությունների կատարելագործում,
- աջակցել կրթության մեջ համակարգային փոփոխություններին:

Լուսակնի միջնակարգ դպրոցի ուսուցչական անձնակազմը համալրված է բանիմաց ու բարեկիրթ երիտասարդ ուսուցիչներով՝ ուսուցչի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթների արդյունքներով: ՈՒսուցիչների մասնագիտական որակների զարգացման ու կատարելագործման, ինչպես նաև արդի նորարարություններին ու փոփոխություններին տիրապետելու նպա-տակով տնօրինության կողմից հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է ուսուցիչների մասնակցությունը տարաբնույթ վերապատրաստումներին ու դասընթացներին: Վերապատրաստումներին ուսուցիչների մասնակցության պատասխանատուն ինչպես նաև նախաձեռնողը տնօրինությունն է, քանի որ կարիքի գնահատողն ու խնդիրներին քաջատեղյակը տնօրինությունն է:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ապահովմանն ուղղված իրականացվել են մի շարք միջոցառումներ՝

1. փոխադարձ դասալսումներ,

2. կազմակերպվել բաց դասեր,

3. տնօրինության, մ/մ նախագահների կողմից դասալսումներ, վերլուծություններ, գրավոր աշխատանքների անցկացում և քննարկումներ,

4. մեթոդական քննարկումներ,

5. գրեթե բոլոր ուսուցիչների ակտիվ մասնակցություն «ԿԶՆԱԿ» հիմնադրամի կողմից կազմակերպված նոր ՀՊՉ-ի կիրառմանն ուղղված վերապատրաստում-ներին, <<Մեդիագրագիտությունը դպրոցում>> դասընթացին,

6. զինղեկի կողմից մասնակցություն երկամսյա վարժանքներին,

7. գրեթե բոլոր ուսուցիչները և վարչական աշխատողը մասնակցել են <<ԿԱՊԿ ունեցող սովորողի ուսումնառությունն ապահովող միջոցառումներ>> սեմինարին,

8.<<ԱՌԻՊ-ի մշակում>> թեմայով վերապատրաստմանը մասնակցել են վեց ուսուցիչ և տնօրենը,

9.մասնակցություն <<Ազգային երգ ու պար>> առարկայի վերապատրաս-տումներին, որի արդյունքում էլ 2023-2024 ուսումնական տարվանից դպրոցում ներդրվել է <<Ազգային երգ ու պար>> առարկան,

10. անգլերենի ուսուցչուհին 2021թ-ին մասնակցել է Բրիտանական խորհրդի կողմից կազմակերպված անգլերենի ուսուցիչների վերապատրաստման դաս-ընթացին,

11.մասնակցություն պետական հանրակրթական ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների վերապատրաստման դասընթացին,

12.մասնակցություն հանրակրթության <<Հասարակություն և հասարակական գիտություններ>> բնագավառի չափորոշչի և ծրագրի վերաբերյալ վերապատ-րաստմանը,

13.Կոնրադ Ադենաուերի և ԿԳՄՍ-ի կողմից իրականացրած Հասարակա-գիտություն առարկայի վերապատրաստման դասընթացին մասնակցություն,

14.<<Ֆինանսական կրթությունը դպրոցում>> թեմայով վերապատրաս-տումներին ուսուցիչների մեծ մասի մասնակցություն,

15.<<Ձևափոխող կրթություն>> կրթական հիմնադրամի կողմից կազմակերպած <<Նախագծային աշխատանքի կիրառումը ուսումնական գործընթացում>>, <<Դասի պլանավորումը և դրան ներկայացվող պահանջներ/ նաև նոր ՀՊՉ-ով/, թեմատիկ պլանավորում, դասալսումներ, դասալսումներին ներկայացվող պահանջներ, դասալսման արձանագրություն>> թեմաներով վերապատ-րաստումներին:

16. մասնակցություն բրիտանական խորհուրդի «Ապագայի անգլերեն՝ դեպի գերազանցություն տանող ուղին» ծրագրի շրջանակներում «Դասավանդումն ու ուսումնառությունը դժվարին ժամանակներում» խորագրով դասընթացին:

Լուսակնի միջնակարգ դպրոցը նորարարությունների ձգտող դպրոց է, որտեղ խրախուսվում է անձի ազատ զարգացումը, նոր գիտելիքների ինքնուրույն ձեռք բերումը, սեփական կարծիքի արտահայտումն ու պաշտպանումը, այս ամենին մեծապես նպաստում է դպրոցի ժողովրդա-

վարական և համագործակցային ոգին: Նորարարությունների ապահովումը դպրոցում ենթադրում է մանկավարժական համակազի պատրաստվածության ու զարգացվածության աճ: Ըստ այդմ, մեր դպրոցի մանկավարժներին կարելի է բաժանել հետևյալ խմբերի և նախանշել յուրաքանչյուր խմբի գործունեությունը.

| **Մանկավարժներ** | **Ինչ գործողության մեջ պետք է ներգրավվեն** | **Գործունեության նպատակը** |
|---|---|---|
| Նորարարությունների ակտիվ կողմնակիցներ (90%) | Աշխատանք ստեղծագործական խմբերում, ակտիվ սեմինարներ, պրակտիկ գործունեություն | Հասցնել ավելի բարձր աստիճանի |
| Նորարարությունների իներտ կամ պասիվ կողմնակիցներ (5%) | Մասնակցություն սեմինարներին, մանկավարժական խորհուրդի աշխատանքներին | Ապահովել մասնակցությունը նշված աշխատանքներին |
| <<Ավանդապահներ>> (5%) | Աշխատանք դպրոցի մեթոդմիավորումներում, տեղեկատվության ստացում մանկավարժական խորհրդի նիստերի և միջոցառումների ժամանակ | Ծանոթացնել նորարարական տեխնոլոգիաների առավելություններին |

## ***2.բ. Հաստատության տրամադրած կրթության որակը***

«Կրթության որակը» ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքն է, ուստի ներառում է՝

•սովորողներին, ովքեր պատրաստ են սովորելու և մասնակցելու ուսումնառության գործընթացին՝ ստանալով իրենց ընտանիքների լիակատար աջակցությունը.

•ուսումնական միջավայրը, որը բարեկարգ է ու անվտանգ, ապահովում է առողջության պահպանումն, ինչպես նաև հագեցած է անհրաժեշտ ուսումնական գույքով և ռեսուրսներով.

•կրթության բովանդակությունը, որը սահմանված է կրթության չափորոշիչներով, առարկայական ծրագրերով, ուսումնական պլաններով ու արտացոլված ուսումնամեթոդական նյութերում և ուղղված է սովորողների մոտ հիմնարար գիտելիքների, կենսական հմտությունների և արժեքների ձևավորմանը,

ներառյալ առողջության պահպանման, առողջ սնուցման և խաղաղության պահպանմանն ուղղված գիտելիքներն ու հմտությունները զարգացնելուն.

•որակյալ ուսուցչական կազմը, որն օգտագործում է աշակերտակենտրոն ուսուցման մեթոդներ.

•հմուտ ղեկավարվող ուսումնական գործընթացը և արժանահավատ ու արդար գնահատման համակարգը, որը խթանում է սովորողների առաջադիմությունն ու նվազեցնում անհավասարությունները նրանց միջև.

- ուսուցման վերջնարդյունքները, որոնք ներառում են սովորողների գիտելիքները, հմտությունները, արժեքային համակարգն ու աշխարհահայացքը և ուղղված են հասարակության մեջ սովորողների դրական մասնակցությանը:

Կրթության որակի բարելավման առաջնահերթ պայմաններից մեկը մասնագիտական բարձր որակավորում ունեցող ուսուցիչների առկայությունն է: Լուսակնի միջնակարգ դպրոցի բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն, բանիմաց, հմուտ, արագ կողմնորոշվող մասնագետներ են, ովքեր ձգտում են մասնագիտական կատարելագործման, ինքնակրթության ու ինքնազարգացման: Մանկավարժական որակյալ կադրերով համալրվածությունը դեռ բավարար չէ որակյալ կրթության ապահովման համար: Իրենց գործունեությունը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է շենքային բավարար պայմաններ, հագեցված նյութատեխնիկական բազա, լաբորատորիաներ: Հաջորդ ուսումնական տարում այս պայմանները Լուսակնի միջնակարգ դպրոցի համար այլևս երազանք չի լինի: Հաջորդ կարևոր պայմանը նոր չափորոշիչների և գնահատման նոր համակարգի սահուն ու անցնցում ներդրումն է: Բարեփոխումների նպատակով գնահատման համակարգում կատարված փոփոխությունները կարևոր են, քանի որ գնահատման հին համակարգը ժամանակակից պահանջներին մասամբ էր համապատասխանում: Այն բավարար չափով չէր նպաստում սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռք բերմանն ու զարգացմանը, քանի որ հնարավորություն չէր տալիս բացահայտելու և հաշվառելու դրանց ողջ բազմազանությունը: Դասապրոցեսում բազմազանություն ապահովելու նպատակով Լուսակնի միջնակարգ դպրոցի գրեթե բոլոր ուսուցիչները վերապատրաստվել են և անտրտունջ լծվել աշխատանքների իրականացմանը: Նրանց համար առաջնային է մեթոդների, հնարների հարուստ զինանոցի կիրառմամբ սովորողների համար դասը դարձնել սպասված, հրապուրիչ, ստեղծագործական, հետաքրքիր իրադարձություն:

Կրթության բարձր որակ ապահովելու համար պետք է հաշվի առնել սովորողների նախասիրությունները, անհատական առանձնահատկությունները,

հնարավորություններն ու կարիքները, ինչը հմտորեն իրականացվում է Լուսակնի միջնակարգ դպրոցում ։ Լուսակնի միջնակարգ դպրոցում սովորում են հայ և եզդի աշակերտներ, ինչն էլ որակի ապահովման առումով ունի իր առավելություններն ու դժվարությունները: Առավելությունն այն է, որ հարգում են միմյանց ազգային ավանդույթներն ու սովորույթները, չկա խտրական տրամադրվածություն: Եզդի սովորողների կողմից հայերենին վատ տիրապետելը տարրական դասարաններում թե՛ ուսուցիչներին և թե՛ սովորողներին մեծ դժվարությունների առջև է կանգնեցնում: Տարրական դպրոցի ավարտին արդեն դժվարությունը հաղթահարված է լինում և առաջադիմության ցուցանիշը սովորաբար բարձր է լինում: Որակի ապահովման վրա բացասաբար է անդրադառնում նաև, հիմնականում եզդի սովորողների, պարտուսից դուրս մնալը: Աղջիկները վաղաժամ ամուսնանում են, կամ էլ հիմնական դպրոցն ավարտելուց հետո չեն շարունակում ուսումը, իսկ տղաներն էլ, տարբեր տարիքում, ծնողների հետ գյուղատնտեսական աշխատանքներով կամ անասնապահությամբ են զբաղվում: Դասարանների թվաքանակի փոփոխման պատճառը աշակերտների թվաքանակի աճն ու նվազումն է: Աշակերտների թվաքանակի աճի ու նվազման հետ կապված դասարանների կոմպլեկտավորումը ամեն տարի փոփոխվում է: Ինչի արդյունքում փոփոխվում է նաև դասարանների թվաքանակը: Առաջա-դիմությունը բարձր է այն կրթական աստիճանում, որտեղ աշակերտների թվաքանակը մեծ է: Դասարան կա , որտեղ մի աշակերտ է սովորում, և այն էլ թույլ կարողությունների տեր, բնականաբար, բարձր ցուցանիշ գրանցել հնարավոր չէ: Հիմնական դպրոցում առաջադիմությունը ավելի ցածր է, քան տարրականում: Հիմնական դպրոցում սովորող երեխան դասերից հետո օգնում է ծնողներին գյուղատնտեսական աշխատանքներում, հետևաբար քիչ ժամանակ է ունենում դասերով զբաղվելու համար: Երեխան նկատում է, որ դպրոց գալով փող չի աշխատում, իսկ, ենթադրենք անասնապահությունից եկամուտ է ստանում, սկսում է աչքաթող անել դասերը: Շատ դեպքերում էլ ծնողն է խրախուսում իր անչափահասի փող վաստակելու հանգամանքը: Ահա առաջադիմության նվազման ևս մեկ պատճառ: Աշխատանքներ են տարվում թե՛ ծնողների, թե՛ աշակերտների հետ, նրանց ինքնագիտակցության բարձրացման, ուսման նկատմամբ սեր և հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ: Հետևողական և համագործակցային աշխատանքների արդյունքն արդեն ակնհայտ է: Բազմահամակազմ դասարանների առկայությունը նույնպես իր բացասական և դրական ազդեցությունն է ունենում կրթության ընդհանուր որակի վրա: Այս ուսումնական տարում դպրոցում գործում է մեկ

երկհամակազմ դասարան: Կոմպլեկտավորված են 1-ին և 3-րդ դասարանները: Եթե լիներ առանձին դասասենյակ, շատ հավանական է, որ այս կոմպլեկտն էլ չլիներ: Սակայն դպրոցն իր ողջ գործունեության ընթացքում զերծ չի մնացել դասարանների կոմպլեկտավորումից՝ աշակերտների նվազ քանակի, ֆինանսական միջոցների սղության, ինչպես նաև անհրաժեշտ քանակի դասասենյակներ չլինելու պատճառով: Դժվար է բազմահամակազմ դասարան-ներում ուսուցումը կազմակերպել, քանի որ ուսուցիչները չունեն այդպիսի դասարաններում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմա-կերպման որևէ մեխանիզմ: Յուրաքանչյուր ուսուցիչ իր դասը կազմակերպում է ինչպես նպատակահարմար է գտնում՝ մշակում է առանձին մեթոդաբանություն, ուշադրության կենտրոնացման հնարներ, շատ հաճախ համադրում է նպատակները՝ ելնելով դասարանների առանձնահատկությունից: Քանի որ բազմահամակազմ դասարանում ուսուցիչն աշխատում է տարբեր ուսումնական ծրագրեր իրականացնող տարատարիք աշակերտական խմբերի հետ, ապա նա միշտ կանգնում է դասաժամի ռացիոնալ օգտագործման խնդրի առաջ, ինչն էլ ուսուցչից պահանջում է լրացուցիչ ջանքեր, ճկունություն ու հմտություն: Ստացվեց, որ իրավիճակն էլ է նպաստում ուսուցչի ինքնազարգացմանն ու ինքնակատարելագործմանը: Այսպիսի դժվարությունները մեր դպրոցում հաղթահարվում են միասնական ջանքերով: Ավագ ուսուցիչները միշտ էլ իրենց փորձով ու հմտություններով օգնում են սկսնակներին: Փորձի փոխանակումը մեծ նշանակություն ունի նաև ներանձնային բարիդրացիական հարաբերությունների ձևավորման գործում: Նաև այսպիսի իրավիճակներից ելնելով մեր դպրոցում բնականորեն ստեղծվել է ընտանեկան մթնոլորտ, ուր մարդկային հարաբերություններն ավելի սերտ են և հուզականորեն հագեցած: Սա դաստիարակչական հզոր ներուժ է: Այստեղ խոսքային, առավելապես ուսուցանող գնահատումը, և համապատասխան հետադարձ կապի ապահովումը ավելի նպատակահարմար է և արդյունավետ: Ի տարբերություն մեծ դպրոցների, այստեղ լայն հնարավորություն է ստեղծված յուրաքանչյուր աշակերտի ճանաչել լիարժեքորեն, հասկանալ նրա հոգեհուզական վիճակը, ընդունակություններն ու զարգացման հնարավորությունները, բնավորությունն ու խառնվածքը, բարոյական որակները: Լուսակնի միջնակարգ դպրոցում անհատական ուսուցման հնարավորությունները բազմահամակազմ դասարաններում ավելի մեծ են, սովորողներն ավելի ազատ են ու ինքնուրույն, նրանց մոտ ավելի զարգացած են համագործակցային կարողությունները, ուշադրության կենտրոնացումը, էմպատիայի զգացումը:

2017թ դպրոցը միջնակարգ դառնալուց հետո 12-րդ դասարանն ավարտել է ընդամենը 1 հայ սովորող, ով ընդունվել և սովորում է ՀՊՄՀ-ում, իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 6, ովքեր նույնպես հայեր են:

Մեր դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանում մեծ տեղ է հատկացվում ուսումնական և դաստիարակչական միջոցառումներին, որոնց գրագետ ու նպատակային կազմակերպումը դրականորեն է անդրադառնում կրթության որակի վրա: Որակյալ կրթության ապահովման համար առանցքային նշանակություն ունի հայեցի դաստիարակության դերը: Հայրենասեր քաղաքացի դաստիարակելու համար սովորողին ներկայացվում է հայրենիքի իրական պատկերը՝ ներկա դժվարությունները, կարողությունները, ուժեղ կողմերը, զարգացման ներուժը, հեռանկարները, զարգացման համար անհրաժեշտ նախապայմանները: Այս առումով մեր բոլոր մանկավարժները ջանում են, որպեսզի սովորողները ունենան մտավոր, ֆիզիկական, հոգևոր բարձր որակներ, իր առջև դրված խնդիրները լուծելու, դժվարությունները հաղթահարելու կամք, ազգային արժեքները գնահատելու և պահպանելու բարձր գիտակցում: Սովորողը կարողանա հստակ գիտակցել, կարևորել իր դերը, օգտակարությունը հայրենիքի շենացման, զարգացման ու պաշտպանության գործում, ունենա հստակ մասնագիտական կողմնորոշում:

Քանի որ ժամանակակից աշակերտն այսօր այլևս գրադարանի մշտական ընթերցողը չէ, հետևաբար գտել ենք լուծումներ գոնե մասամբ պահպանելու սերը դեպի գիրքը և գրադարանը: Հնարավոր չէ միայն ամառային արձակուրդներին հանձնարարվող, երբեմն էլ արտադասարանական ընթերցանության միջոցով ջերմություն առաջացնել դեպի գրադարանն ու գիրքը: Հետևաբար, գրքի, գրադարանի, ընթերցասիրության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու նպատակով կազմակերպվում են մի շարք միջոցառումներ.

1.դպրոցական գրադարանի <<հիվանդ>> գրքերի բուժում՝ վնասված թերթերի սոսնձում, կազմերի ամրացում, ընդհանուր վերականգնում,

2.գրքերի նվիրատվություն, ծանոթացում գրադարանի գույքային ունեցվածքին, կարևորություն հաղորդել նրանց սեփական արարքին՝ դպրոցի գրադարանին գիրք նվիրելուն: Այս աշխատանքը երկու նպատակ ունի՝ չփչացնել գրադարանի գիրքը և իր նվիրած գիրքը գրադարանի ունեցվածքն է դառնալու, հետևաբար ավելի հոգատար կլինեն գրքերի հանդեպ,

3.միջոցառումներ նվիրված գրքին՝ աշակերտների ներգրավվածությամբ գրքին ու գրքի պատմությանը նվիրված ցերեկույթներ, ընթերցումներ, ընթերցված գրքերի քննարկումներ,

4.ստեղծագործող աշակերտները իրենց ստեղծագործություններից կազմում են գրքեր, կազմակերպվում է գրքի քննարկում, այնուհետև նվիրում են դպրոցի գրադարանին: Գրքի նկարազարդումները իրենք են անում, իսկ շարվածքը ձեռագիր պիտի լինի:

Ամեն տարի դպրոցում կազմակերպվում է, ավանդույթ դարձած, <<Գեղեցիկ ձեռագիր>>, <<Հետաքրքիր ընթերցանություն>>, <<Հմուտ ձեռքեր>> ներդպրոցական մրցույթները, որոնց աշակերտները մեծ ոգևորվածությամբ են մասնակցում: 2022 թվականին դպրոցի բարձր դասարաններում սովորող չորս աշակերտներ ՀԵՊ առարկայից մասնակցեցին աստվածաշնչային գիտելիքների մրցույթին և ցուցաբերեցին գոհացնող արդյունք: Դպրոցի բարձր դասարանների սովորողները տարվա մեջ 2-3 անգամ այցելում են դպրոցին կցված զորամաս, ծանոթանում զինատեսակներին, զորամասի առօրյային, կենցաղին, հանգստի պայմաններին, մասնակցում զենքի վերանորոգման աշխատանքներին, սովորում զենք քանդել, հավաքել, զորամասից են այցեր կատարվում դպրոց <<Պաշտպան հայրենյաց>> ծրագրի վերաբերյալ բացատրական աշխատանքներ իրականացվում: Անցկացվում են ռազմահայրենասիրական թեմաներով ինտելեկտուալ խաղեր, վիկտորինաներ և մարզական մրցույթներ:

Դպրոցի օլիմպիադաների մասնակցության ցուցանիշը ցածր է, սակայն հաշվետու ժամանակահատվածում ՀԵՊ առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակից 1 սովորող ենք ունեցել: Հետևողական աշխատանքներ են տարվում մասնակցության ցուցանիշը բարձրացնելու ուղղությամբ: 2021-2022 ուսումնական տարում 45 սովորողներից 7-ը գերազանց առաջադիմությամբ են ավարտել, ունեցել ենք պարտուսից դուրս 4 սովորող, 2022-2023 ուսումնական տարում 40 սովորողներից 3-ը գերազանց առաջադիմությամբ, պարտուսից դուրս՝ 2 սովորող, ներկա ուսումնական տարում այս խնդիրն այլևս չկա:

2022-2023 ուսումնական տարում կրթության որակի ստուգման նպատակով տնօրինության կողմից անցկացվել են գրավոր աշխատանքներ տարբեր առարկաներից, դասալսումներ բոլոր դասարաններում՝ տնօրենի կողմից 70 դասալսում, մ/մ նախագահների կողմից 55, փոխադարձ դասալսումներ՝ 50:

2022-2023 ուսումնական տարում Լուսակնի միջնակարգ դպրոցի 1-ին դասարան է ընդունվել 1 ԿԱՊԿ ունեցող աշակերտ: Սովորողն ունի

բազմազգայական խանգարումներ ։ Բախվեցինք մի նոր իրավիճակի, որին դեռ լիարժեք պատրաստ չէինք, քանի որ առաջին դեպքն էր դպրոցում, ներառման գաղափարը լիարժեք ուսումնասիրված չէր, նյութատեխնիկական բազան լիարժեք չէ, հարմարեցումներն էլ բացակայում են: Դասավանդող ուսուցիչները ողջ տարվա ընթացքում օգնություն, ուղղորդում, մասնագիտական աջակցություն ստացան ՏՄԱԿ-ի բազմամասնագիտական թիմի կողմից: Փորձի փոխանակումը, վերապատրաստումները և ի վերջո մասնագիտական ճիշտ ուղղորդումը նպաստեց իրավիճակի սահուն հանգուցալուծմանը: Արդյունքում մեզ համար կարևորեցինք ուսումնառության 3 կարևոր դրույթ.

1.ուսուցանվող նյութը մատուցել բոլորին մատչելի եղանակով,

2.սովորողին առաջարկել գիտելիքի ստուգման իրեն հարմար տարբերակ,

3.կարողունակահեն ուսումնական գործընթացի ապահովման համատեքստում ուսուցիչներն ազատ են սովորողներին մոտիվացնելու տարբերակի ընտրության հարցում:

Հարկավոր է հստակ գիտակցել, որ ներառումը սկսվում է ընտանիքում, ապա դպրոցում, հետո միայն հասարակության մեջ: ՈՒստի շատ կարևոր է սովորողների մոտ կոտրել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպերը, խտրական վերաբերմունքը և նրանց մտածողության, համոզմունքների, արժեքային համակարգի մեջ արմատավորել ներառման գաղափարը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան դառնում է իրավահավասար բոլոր երեխաների հետ, որը հանգեցնում է ստեղծագործական հնարավորություններով ու ինքնուրույն գործելու պատրաստ մարդու ձևավորմանը: Երեխայի ընտանիքը դադարում է խուսափել իր երեխայի միջավայրի հետ շփումից, քանի որ նույն միջավայրը հանդուրժողականությամբ է վերաբերում իր երեխային՝ ընդունելով վերջինիս հավասար լինելու փաստը: Ընտանիքի հետ տարվող մասնագիտացված աջակցության ծառայությունները և միջավայրի վերաբերմունքը օգնում են ծնողին ավելի օգտակար լինել իր երեխային, դուրս գալ անելանելիության բարդույթից և օգնել իր երեխային հաղթահարելու անհատական ուսուցման պլանը:

Վերը նշված նպատակներն ու գաղափարներն իրականացնելու համար դպրոցում անցկացվեցին մի շարք միջոցառումներ. կլոր սեղան- քննարկում <<Հաշմանդամություն. Անձի՞ թե հասարակության խնդիր>>, <<Ներառական կրթություն՝ կրթություն բոլորի համար>>, <<Հավասար հնարավորություններ>> թեմաներով և տեղեկատվական ակցիաներ ծնողների ու սովորողների համար: Ներառականության ապահովման և իրավիճակի ճիշտ կառավարման ու

աշխատանքի արդյունավետության համար մշակվեց հետևյալ աշխատանքային սկզբունքները՝

1.բաց լինել բոլոր փոփոխությունների համար, դրսևորել ճկուն և իրավիճակին հարմարվելու կարողություն,

2.զարգացման բարդ խանգարումների դեպքում հանրակրթական առարկայական ծրագրերի յուրացումն իրականացնել անհատական ուսումնական պլաններով,
3.ներառման ճիշտ իրականացում, աշակերտի հարմարեցում նոր միջավայրին ու պայմաններին,
4.սովորողի մեջ ձևավորել սոցիալական հմտություններ ու կարողություններ, որոնք նրա ներառումը հասարակության մեջ կդարձնի իրատեսական,
5.գտնել և վեր հանել այն ներուժը, որով օժտված է երեխան, այդ ներուժը դարձնել հենարան՝ նրան կրթելու և զարգացնելու համար,
6.հաշվի առնել այն հանգամանքը, որ ԿԱՊԿ ունեցող երեխայի հետ աշխատելիս սահմանափակ հնարավորությունները կարող են փոխել կրթության բովանդակությունը,
7.հնարավորությունների ստեղծում և՛ դասարանային պայմաններում, և՛ հոգեբանական մակարդակում,
8.հույժ կարևոր է հաշվի առնել ծնողի հոգեբանական առանձնահատկություն-ները, նրա հետ բարիդրացիական հարաբերություններ ստեղծելը:

Պետք է հասնենք նրան, որ ցանկացած սովորող, անկախ զարգացման առանձնահատկություններից և ուսումնառության առանձնահատկություններից, իրեն ապահով, պաշտպանված և կարևոր զգա դպրոցում, դասասենյակում: Ցանկացած պարագայում նա պետք է ունենա իր մտքերը, հույզերն ու զգացմունքներն ազատ արտահայտելու հնարավորություն, բարենպաստ միջավայր և բարեհամբույր, համբերատար ունկնդիր: Այս ամենն իրագործելի կլինի, եթե արմատական հեղաշրջում լինի մեր հոգում, գիտակցության մեջ, քանի որ ներառող ուսուցումը, որպես գործընթաց, պետք է սկսվի մեր ներսից, այլ ոչ թե դասասենյակից: Ներառական կրթությունը հաստատությունում արմատավորելու համար մեր բոլոր ջանքերը պետք է միտված լինեն այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծմանը, որ բոլոր երեխաները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից, ունենան կրթություն ստանալու հավասար հնարավորություններ: Նման միջավայրը պետք է լինի երեխաներին ներառող, կրթություն ստանալու համար արդյունավետ, երեխաների նկատմամբ բարյացակամ, նրանց առողջության համար ապահով ու անվտանգ: Ներառումը ենթադրում է կրթության առավել լայն տեսլական, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ՝

- հաշմանդամություն ունեցող երեխաները

- բռնության ենթարկվող երեխաները
- աշխատող երեխաները
- փախստական կամ տեղահանված երեխաները
- միգրանտները
- ծայրահեղ չքավորության մեջ ապրող երեխաները
- լեզվական փոքրամասնությունները
- ազգային փոքրամասնությունները
- հակամարտությունների գոտիների երեխաները
- ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և այլ հիվանդությունների հետևանքները կրող երեխաները և այլն:

Կրթության որակը բարձրացնելու համար հստակ նպատակներ են սահմանվել զարգացման ծրագրում, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության կողմից հաստատված որակի ապահովման չափանիշներին ու ոլորտի զարգացման գերակա ուղղություններին , ինչպես նաև հասարակության պահանջներին: Կրթության արդյունքներն ու ծառայություններն էլ պետք է բավարարեն շահակիցների կարիքներին ու պահանջներին: Լուսակնի միջնակարգ դպրոցը որակի ապահովման գործընթացի բոլոր մակարդակներում պետք է ապահովի.

- թափանցիկ և ակտիվ գործունեություն, սրտացավ վերաբերմունք որակի նկատմամբ,
- քննադատական վերլուծություն իրականացնելու պատրաստակամություն,
- ներքին կանոնակարգ՝ հստակ ընթացակարգերով և դրանց հետևողական իրականացմամբ,
- հանրամատչելի և հստակ սահմանված պատասխանատվություններ որակի վերահսկման և գնահատման համար,
- լավագույն փորձի բացահայտման և տարածման ձգտում,
- խնդիրների լուծման համար պատշաճ տեղեկատվության վրա հիմնված տեղին ու համապատասխան գործողություններ:

***<u>Դասարանների թիվը՝ընթացիկ և նախորդ չորս ուսումնական տարիների համար</u>***

| Դասարանների թիվը | 2019-2020 ուս.տարի | 2020-2021 ուս.տարի | 2021-2022 ուս.տարի | 2022-2023 ուս.տարի | 2023-2024 ուս տարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 -ին դասարան | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | նվազում |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2-րդ դասարան | 1 | 1 | 1 | 0.5 | 0.5 | նվազում |
| 3-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 4-րդ դասարան | 1 | 1 | 1 | 1 | 1 | անփոփոխ |
| 5-րդ դասարան | 0.5 | 0.5 | 1 | 1 | 1 | աճ |
| 6-րդ դասարան | 0.5 | 0.5 | 1 | 1 | 1 | աճ |
| 7-րդ դասարան | 0.5 | 0.5 | 0.5 | 1 | 1 | աճ |
| 8-րդ դասարան | 1 | 0.5 | 0.5 | 1 | 1 | աճ |
| 9-րդ դասարան | 0.5 | 1 | 1 | 1 | 1 | աճ |
| 10-րդ դասարան | 0.5 | 0.5 | 1 | 1 | 0 | նվազում |
| 11-րդ դասարան | 0.5 | 0 | 0 | 1 | 0 | նվազում |
| 12-րդ դասարան | 0 | 0.5 | 0 | 0 | 1 | աճ |
| Ընդամենը | | 8 | 9 | 9 | | |

***Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ նախորդ երեք ուսումնական տարիների համար:***

| Ցուցանիշը | 2020-2021 ուստարի | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ | 45 | 45 | 40 | նվազում |
| Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ | 46 | 43 | 37 | նվազում |
| Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը | 3 | 2 | 1 | նվազում |
| Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը | 4 | 7 | 4 | աճ |

***Լուսակնի միջնակարգ դպրոցի աշակերտների ընդհանուր թվաքանակն ընթացիկ և վերջին 4 ուսումնական տարիների կտրվածքով՝ ըստ սեռի և ազգային պատկանելության:***

| | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | 2023-2024 | Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում) |
|---|---|---|---|---|---|---|
| Սովորողների ընդհանուր թիվը, որից՝ | 40 | 45 | 45 | 40 | 37 | նվազում |
| Տղա | 18 | 21 | 22 | 18 | 16 | նվազում |
| Աղջիկ | 22 | 24 | 23 | 22 | 21 | նվազում |
| Հայ | 24 | 27 | 26 | 23 | 21 | նվազում |
| եզդի | 16 | 18 | 19 | 17 | 16 | նվազում |

***Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2022-2023 ուսումնական տարում***

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը 2023թ | | | Պետական պարտադիր [1]առարկաներիցտարեկան գնահատականներիմիջինը | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու/Մայրենի | 3 | 1 | 0 | 8 | 9 | 0 | 8 | 16 | 0 |
| Գրականություն | | 1 | | | 9 | | | 15 | |
| Օտար լեզու | 3 | 1 | | 8 | 9 | | | | |
| Ռուսաց լեզու | 3 | 1 | | 8 | 9 | | | 16 | |
| Մաթեմատիկա | 3 | | | 7 | | | 8 | 15 | |
| Երաժշտություն | 3 | | | 8 | | | | | |
| Կերպարվեստ | 3 | | | 9 | | | | | |
| Ենլշրջ. աշխ-ը | 3 | | | 7 | | | | | |
| Տեխնոլոգիա | 3 | | | 9 | | | | | |
| Ֆիզկուլտուրա | 3 | 1 | | 9 | 9 | | | 9 | |
| Շախմատ | 3 | | | 8 | | | | | |
| Հայ.աշխարհ. | | 1 | | | 7 | | | | |
| ՀԵՊ | | 1 | | | 8 | | | | |
| Հասարակագիտություն | | 1 | | | 9 | | | | |
| Հայոց պատմ. | | 1 | | | 8 | | | 17 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Համ. պատմ. | | 1 | | | 9 | | | | |
| Հանրահաիվ | | 1 | | | 7 | | | | |
| Երկրաչափու թյուն | | 1 | | | 7 | | | | |
| Ինֆորմատիկ ա | | 1 | | | 8 | | | | |
| Ֆիզիկա | | 1 | | | 7 | | | | |
| Քիմիա | | 1 | | | 7 | | | | |
| Կենսաբանութ յուն | | 1 | | | 7 | | | 14 | |
| ՆԶՊ | | 1 | | | 8 | | | | |
| Ընդամենը | 3 | 1 | | | | | | | |

*Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2021-2022 ուստարում*

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը 2022թ | | | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննություններիքննությու նների միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Հայոց լեզու/ Մայրենի | 7 | 1 | 0 | 7 | 7 | 0 | 8 | 11 | 0 |
| Գրականություն | | 1 | | | 8 | | | 14 | |
| Մաթեմատիկա | 7 | | | 7 | | | 6 | | |
| Ռուսաց լեզու | 7 | 1 | | 7 | 7 | | | 12 | |
| Օտար լեզու | 7 | 1 | | 6 | 7 | | | | |
| Երաժշտություն | 7 | 1 | | 9 | | | | | |
| Կերպարվեստ | 7 | 1 | | 9 | | | | | |
| Եսնշրջ.աշխ-ը | 7 | 1 | | 7 | | | | | |
| Տեղնոլոգիա | 7 | 1 | | 9 | | | | | |
| Ֆիզկուլտուրա | 7 | 1 | | 9 | 9 | | | 9 | |
| Շախմատ | 7 | 1 | | 7 | | | | | |
| Հայ.աշխարհ. | | 1 | | | 6 | | | | |
| Հայոց պատմ. | | 1 | | | 7 | | | 13 | |
| Համ. պատմ. | | 1 | | | 7 | | | | |
| ՀԵՊ | | 1 | | | 7 | | | | |
| Հասարակագիտու թյուն | | 1 | | | 7 | | | | |
| Հանրահաշիվ | | 1 | | | 6 | | | 11 | |
| Երկրաչափություն | | 1 | | | 6 | | | | |
| Ինֆորմատիկա | | 1 | | | 7 | | | | |
| Ֆիզիկա | | 1 | | | 6 | | | | |
| Քիմիա | | | | | 6 | | | | |
| Կենսաբանություն | | 1 | | | 6 | | | 15 | |
| ՆԶՊ | | | | | 9 | | | | |
| Ընդամենը | | | | | | | | | |

## *2.թ. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները*

«Առանց նորին ձգտելու, չկա կյանք, չկա զարգացում, չկա առաջընթաց»

Վ.Գ. Բելինսկի

Ուսուցման գործընթաւում ուսուցչակենտրոնից դեպի աշակերտակենտրոն և դասավանդումից դեպի ինքնուրույն ճանաչողական գործունեության անցումը, ինչպես նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը նոր պահանջներ դրեց կրթության համակարգի առջև: ՏՀՏ-ի կիրառությունն ուսումնական գործընթացում իր հետ բերեց կրթության որոկի և մատչելիության բարեփոխումների լայն հնարավորություն: ՏՀՏ-ների ներդրումը ուսումնական գործընթացում թույլ տվեց փոխել հին մոտեցումները, առաջադրել և իրագործել բոլորովին այլ՝ որակապես նոր խնդիրներ: ՈՒսումնադաստիարակչական աշխատանքներում ՏՀՏ-ների ներդրման նպատակներն են՝ բարձրացնել սովորողների առաջադիմությունը, կատարելագործել դասավանդման որակը՝ նպաստելով դասապրոցեսի ժամանակային և տարածքային սահմանափակումների վերացմանը: ՈՒսուցիչը պետք է կարողանա ավանդական կրթական համակարգը վերափոխել ժամանակակից տեխնոլոգիաներով, կրթության ու վերակրթության հնարավորություն ունենա ուսումնական նյութերի, էլեկտրոնային թեստերի, դասավանդման մեթոդաբանական նյութերի ստեղծման և տարածման համար: Այս ամենը հանգեցրեց մարդկային հմտությունների և գիտելիքների շարունակական նորացմանը, ինչն էլ անարգել իրականացվում է Լուսակնի միջնակարգ դպրոցում: Հեռավար ուսուցման կազմակերպման, էլեկտրոնային դասամատյանի գործարկման, էլեկտրոնային լաբորատորիաներից օգտվելու անհրաժեշտության շնորհիվ ուսուցիչները բարելավեցին իրենց տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու և կիրառելու կարողություններն ու հմտությունները: Դպրոցում առկա տեղեկատվական տեխնոլոգիաները՝ չնայած մաշվածությանը, կիրառվում են ուսումնական գործընթացում, դպրոցավարության մեջ , մենթոր դպրոցների և ծնողների հետ համագործակցման, ուսուցիչների վերապատրաստման գործում: ՈՒսումնական գործընթացում ՏՀՏ-ների կիրառումը օգնում է մեր աշակերտներին խորացնել ուսուցանվող նյութի իմացությունը, հասնել դպրոցական առարկաների ավելի ընդգրկուն ընկալման, ստանալ ավելի բազմազան և, շատ դեպքերում, անձնական պահանջներին ավելի համապատասխան տեղեկատվություն: Հեռավար ուսուցման կազմակերպման պահանջը թե՛ սովորողին և թե՛ ուսուցչին էլ ավելի մոտեցրեց ՏՀՏ-ներին: ՏՀՏ-ների կիրառումը հնարավորություն տվեց սովորողին մուտք գործել հրապուրիչ ուսուցողական միջավայր, որտեղ հասանելի են գրեթե անսահմանափակ քանակությամբ նյութեր, գիտելիքների ձեռք բերման նպատակով դուրս գալ դասագրքի, դպրոցի և ուսումնական ծրագրերի շրջանակներից:

Դպրոցը վերջին շրջանում ակտիվորեն համագործակցեց մենթոր դպրոցի հետ, ինչի արդյունքում ՏՀՏ-ներից օգտվելու և կիրառելու հմտություններն էլ ավելի զարգացան, ձևավորվեցին ուսումնական գործընթացին արդյունավետ մասնակցելու, տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, ընտրելու, հավաքելու, ուսումնասիրելու և դասակարգելու կարողությունները: Համագործակցության ընթացքում տեխնիկական որևէ խնդիր չառաջացավ: Հեռավար դասընթացի ժամանակ կիրառվեցին թե՛ համակարգիչներ և թե՛ հեռախոսներ: Զարմանալի էր, որ հեռավար ուսուցման կազմակերպման ողջ ընթացքում սովորողներն ու ուսուցիչները ցուցաբերեցին ճկուն հարմարվողականություն՝ չնայած դժվարություններին: ՏՀՏ-ների կիրառումը հնարավորություն տվեց և օգնեց մեզ միօրինակությունից սահուն անցում կատարել բազմազանության, մրցակցությունից՝ դեպի համագործակցություն, ուսուցչակենտրոնից՝ աշակերտակենտրոնի, ակտիվացավ աշակերտների ինքնուրույն ուսումնական գործունեությունը՝ փոխելով աշխատանքի բնույթը, ինքնուրույն աշխատանք կատարելու գործառույթը: Վերափոխվեց ուսուցչի դերը՝ ազատվեց գիտելիքի միակ աղբյուր լինելու դերից, ուսուցիչն, այս պարագայում, սովորողի կրթական գործը կազմակերպողն է, նրան աջակցող և գնահատող գործընկերն է:

Լուսակնի միջնակարգ դպրոցում լաբորատորիաների բացակայության պայմաններում ՏՀՏ-ների կիրառումը մեծ դեր ունի նաև բնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի վերաձևավորման գործընթացում: Էլեկտրոնային լաբորատորիաների վիրտուալ փորձերը փոխարինում են ֆիզիկական փորձերին: ՏՀՏ-ների կիրառությունը, մասնավորապես տվյալների մեկնաբանության և գրաֆիկների կառուցման գործիքները արագացնում ու ավելի արդյունավետ են դարձնում աշխատանքային գործընթացները՝ նշանակալիորեն փոքրացնելով աշակերտների համար դժվար ու ձանձրալի բաղադրիչները, պակասեցնում աշխատատարությունը, զերծ պահում մարդկային չափման սխալներից՝ խնայելով ժամանակը: Համակարգիչների մոդելը թույլ է տալիս փոխել ժամանակի մասշտաբը և ուսումնասիրել ինչպես շատ դանդաղ, այնպես էլ շատ արագ ընթացող երևույթներ: Փորձը կարելի է կրկնել բազմակի անգամ, արագացնել կամ կանգնեցնել ցանկացած տեղում: Հնարավորություն է ընձեռում ստանալ մեծությունների միջև եղած կախվածությունների գրաֆիկները: ՏՀՏ-ների կիրառումը գործնական աշխատանքներում և հետազոտություններում օգնում են աշակերտներին ընկալել գործընթացն իբրև ամբողջություն (օրինակ՝ բույսերի աճը, բնապահպանական բնույթի փոփոխությունները), աշխատել ուսուցչից համեմատաբար անկախ, համագործակցել դասընկերների հետ՝ ցուցաբերելով միացյալ արդյունքներ: Դասապրոցեսը հարստանում է տեսազննական միջոցներով, որոնք խթանում են աշակերտների հետաքրքրությունը դեպի առարկան, օգնում է նրանց ավելի լավ հասկանալ նյութը: Ապահովում է գիտելիքի մատուցման ամբողջականությունը և լայն հնարավորություններ են ստեղծում ինքնուրույն աշխատելու համար:

Դպրոցական միջոցառումները կազմակերպվում են ՏՀՏ-ների կիրառմամբ: ՏՀՏ-ների մոտիվացնող էֆեկտները դպրոցական միջոցառումներն էլ ավելի որակյալ ու գրավիչ են դարձնում:

ՏՀՏ-ի կիրառումը տարրական դասարաններում օգնում է սովորողներին կողմնորոշվել շրջապատող աշխարհի տեղեկատվական հորձանուտում, տիրապետել տեղեկատվական դաշտում աշխատելու գործնական միջոցներին, զարգացնել իրենց հմտություններն ու կարողությունները: Մեր ուսուցիչների կողմից տարրական դասարաններում հեքիաթների, առակների, արձակ ստեղծագործությունների կամ առանձին բանաստեղծությունների ուսուցմը ՏՀՏ-ների միջոցով թույլ է տալիս ապահովել.

- ուսումնական նյութի մեծ ծավալի ուսումնասիրություն,
- տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներով և սարքերով աշխատանքային հմտությունների մշակում,
- սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորում,
- դիտողականության ակտիվություն,
- դասերն անցկացնել բարձր գեղագիտական և հուզական մակարդակներով,
- տարբերակված ուսուցման բարձր մակարդակ,

Ազգային երգ ու պար, երաժշտություն առարկաների դասավանդումն առանց ՏՀՏ-ների կիրառման հնարավոր չէ անգամ պատկերացնել: Մեր դպրոցում ՏՀՏ-ների կիրառմամբ ապահովված է ակտիվ ուսուցումը:

Այս ամենով հանդերձ՝ զգուշություն ենք ցուցաբերում և հետևում մեդիա հիգիենային՝ փորձելով խուսափել ծուղակներից, վտանգներից, կեղծիքից: Սովորողներին մշտապես իրազեկում ենք համացանցից անվտանգ օգտվելու կանոնների մասին:

Նորարարությունների ապահովումը դպրոցում պետք է լինի աստիճանական կարգով, որպեսզի չստեղծվի <<խուճապային տրամադրվածություն>>, ուսուցիչ-ները հասցնեն յուրացնել նորը և նորարարությունը չդառնա խոցելի:

Մեզ համար չափազանց կարևոր է, որ նորարարությունները և որոնումներ չդադարեն: Նորարարությունների ապահովման նպատակով մանկավարժների մասնագիտական հմտությունների զարգացման համար.

- ❖ արտաքին մեթոդական աջակցություն ստանալու նպատակով դպրոց հրավիրել ԿԶՆԱԿ-ի, ՀՊՄՀ-ի կամ մանկավարժական այլ կազմակերպությունների համապատասխան մասնագետների, կամ նրանց մասնակցությամբ կազմակերպել հեռավար սեմինարներ,
- ❖ ներդնել նոր գաղափարներ՝ համապատասխանեցնելով Լուսակնի միջնակարգ դպրոցի առանձնահատկություններին,
- ❖ զարգացնել սեփական նորարարական մանկավարժական մտածողութ-յունը, ստեղծագործաբար լուծել առաջացող մանկավարժական խնդիրները,
- ❖ համատեղ հանդիպումների և քննարկումների արմատավորում, ինչը թույլ կտա զարգացնել և համաձայնեցնել դպրոցի բոլոր ուսուցիչների մանկավարժական որակները:

Լուսակնի միջնակարգ դպրոցի տնօրենը՝ իբրև նորորարությունների կազմակերպչ, առաջիկա 5 տարիներին նոարարությունների ապահովման համար պետք է.

**Վերլուծի.**

- համայնքում, մարզում կրթության համակարգի զարգացման միտումները.
- կոլեկտիվի՝ մանկավարժական նորարարությաունների իրականացնելու հնարավորությունները,
- սովորողների և նրանց ծնողների պահանջմունքները դպրոցում մանկավարժական նորարարություններ պահանջող կրթական ծառայությունների նկատմամբ,
- դպրոցում մանկավարժական նորարարությունների փորձաքննության և ներդրման արդյունքները

**Կանխատեսի**

- կրթության և այլ սոցիալական համակարգերում կատարվող փոփոխությունների հնարավոր ազդեցությունները դպրոցի վրա,
- դպրոցի պահանջները մանկավարժական նորարարությունների նկատմամբ,
- դպրոցում մանկավարժական նորարարությունների ներդրման հետևանքները

**Պլանավորի.**

- ներդրվող մանկավարժական նորարարությունները

**Կազմակերպի.**

- դպրոցում նորարարությունների փորձաքննությունը և ներդրումն ապահովող կառույցների ստեղծումը,
- նորարարական գործունեության մասնակիցների մասնագիտական հմտությունների զարգացմանն ուղղված միջոցառումները,
- դպրոցի համար նշանակալի մանկավարժական նորարարությունների մասին տեղեկատվության հավաքումը,
- մանկավարժական նորարարությունների փորձաքննության և ներդրման ընթացքի վերահսկողության համակարգը

**Համակարգի.**

- նորարարական գործընթացների մասնակիցների համատեղ գործունեությունը,
- դպրոցի աշխատողների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչների համագործակցությունը մանկավարժական նորարարությունների ներդրման ընթացքում:

## <u>2.ժ. Հաստատությունում առկա հիմնախնդիրները</u>

| h/h | Հիմնախնդիրներ | Գործողություններ |
|---|---|---|
| 1 | Շենքային անբավարար պայմաններ | Նոր, տիպային ուսումնական շենքի շահագործում |
| 2 | Ծնող -ուսուցիչ թույլ կապի բացասական հետևանքները ուսուցման որակի վրա | Ծնողի աշխարհայացքի ընդլայնման և զարգացվածության ընդհանուր մակարդակի բարձրացմանը միտված միջոցառումների կազմակերպում, ծնողների հետ թիմային աշխատանքների ու միջոցառումների կազմակերպում: |
| 3 | Կրթության որակը | Ապահովել մանկավարժների մասնագիտական վերապատրաստումների շարունակականությունը , խթանել ինքնակրթության ու ինքնազարգացման միջոցով նրանց մասնագիտական աճին: Սերտացնել համագործակցությունը շահառու խմբերի հետ: Հետ չմնալ նորարարություններից: Արդյունավետ և նպատակային օգտվել ուսումնական նոր միջավայրից |
| 4 | Համագործակցություն շահառու խմբերի հետ | ՈՒսումնական պլան կազմելիս հաշվի առնել համայքի կարիքները, դպրոցը դարձնել համայքի մշակութային լուսավորչական կենտրոն |
| 5 | Ոլորտը կարգավորող իրավական ակտերի թյուրընկալում | Ակտիվ մասնակցություն ունենալ կրթության ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի քննարկմանը, նյութը յուրացնել խորությամբ և կարողանալ օգտվել դրանից |
| 6 | ՈՒսումնական հաստատության սովորողների մոտիվացում | Հետաքրքրությունների ընդլայնում՝ մշակութային խմբակների ձևավորման , ավանդական և ռազմամարզական խաղերի, հարակից դպրոցների հետ |

| | | |
|---|---|---|
| | | համատեղ միջոցառումների կազմակերպման միջոցով |
| 7 | Նորարարական միջոցառումների առաջնահերթություն | Ուսուցիչներին մղել էլեկտրոնային կրթության իրականացման գործընթացի բարելավմանը՝ արդյունավետ օգտագործելով առկա կրթական ռեսուրսներն ու միջոցները: Աշակերտներին ապահովել հասանելիություն էլեկտրոնային կրթական ռեսուրսներին: |
| 8 | Լուսակնում բնակվող մանկավարժական կադրերի պակաս, մանկավարժության նկատմամբ հետաքրքրությունների անկում | Ձեռնարկել միջոցներ ուսուցչի վարկը բարձրացնելու, կամավոր ատեստավորման մասնակցելը խրախուսելու, և ամենակարևորը, մանկավարժական բուհերի նկատմամբ հետաքրքրությունները մեծացնելու ուղղությամբ |
| 9 | Աշակերտների թվաքանակի նվազում | |
| 10 | Նյութատեխնիկական և ուսումնամեթոդական անբավարար հիմքը | Նյութատեխնիկական և ուսումնամեթոդական բազան լիարժեք կլինի նոր շենք տեղափոխվելիս |

## 3. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ՏԵՂԵՐ, ՌԻՍԿԵՐ, ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի**

| **ՈՒժեղ տեղերը** | **Թույլ տեղերը** |
|---|---|
| Ցանկապատված տարածք | Հարմարեցված շենքային պայմաններ |
| 1-ին հարկի եվրոպատուհաններ | Լաբորատորիաների, սպորտդահլիճի, հանդիսությունների սրահի, ՆԶՊ դասասենյակի, արհեստանոցի բացակայություն |
| Անհատական կոյուղացում | Վթարայնությունը |
| Շուրջօրյա ջրամատակարարում | Փայտյա աստիճանավանդակ և |

| | |
|---|---|
| | աստիճաններ |
| Արտակարգ իրավիճակի ազդարարման համակարգ | Ջեռուցում՝ ըստ դասարանների |
| | Շենքը հարմարեցված չէ ԿԱՊԿ ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժի և ուսուցումն ապահովող պայմաններին, չկան թեքահարթակներ |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Փոքր տարածք, ռեսուրսների սակավություն | Նոր տիպային շենքի շահագործում՝ հագեցած նոր ու անհրաժեշտ ուսումնական գույքով, լաբորատոր սարքավորումներով ու նյութերով |
| Վթարային շինություն | Նոր տիպային շենքի շահա-գործում |
| Լոկալ ջեռուցման բացակայության պատճառով հրդեհային անվտանգություն խնդիր | Նոր տիպային շենքի շահագործումամբ խնդիրը կլուծվի |

*Կառավարման խորհուրդի*

| **ՈՒժեղ տեղեր** | **Թույլ տեղեր** |
|---|---|
| Համախմբվածություն | Երեք հաստատության ներկայացուցիչներ |
| Միմյանց օգնելու պատրաստակամություն | Անդամների նիստերին մասնակցելու դժվարություններ |
| Կիրթ անդամներ | |
| Տարբեր ոլորտների ներկայացուցիչներ | |
| Առաքելության գիտակցում | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Համապատասխան փոփոխություններից | Լայն բացատրական աշխա- |

| | |
|---|---|
| հետո խորհրդի կազմում ընդգրկվելու ցանկության նվազում | տանքնեի կազմակերպում հանգամանորեն ներկակացնել փոփոխությունների իմաստը |
| Խորհրդի կազմում ընդգրկվելու մոտի-վացիայի նվազում | Միջոցառումներին մասնակ-ցության խրախուսում |

*Մանկավարժական խորհրդի*

| ՈՒժեղ տեղեր | Թույլ տեղեր |
|---|---|
| Խորհրդի անդամների համապատասխան մասնագիտական որակավորումը | Տարակարգեր չունենալը |
| Համախմբվածություն, համագոր-ծակցություն և սրտացավություն միմյանց ու դպրոցի հանդեպ | Լուսակնում բնակվող, նաև ընդհանրապես, մանկավարժների պակաս |
| Կիրթ ու առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ | |
| Նորարարությունների տիրապետման ձգտում | |
| Ատեստավորված մանկավարժներ | |
| Կամավոր ատեստավորմանը մասնակցած ու ձգտող ուսուցիչներ | |
| Մասնակցություն գիտամանկավար-ժական սեմինարներին, վեբինարնեին ու քննարկումներին: | |
| Համալրվածություն բոլոր մասնագետներով | |
| ՈՒսուցիչների մասնագիտական հմտությունների աճ | |
| Կրթական, դաստիարակչական, ինչպես նաև հոգեբանական հմտությունների տիրապետում | |
| Նոր մեթոդների, գաղափարների, | |

| | |
|---|---|
| տեխնոլոգիաների կիրառում աշխատանքում | |
| Աշակերտի համակողմանի զարգացմանն ուղղված ուսումնական գործընթացների կազմակերպում | |
| Ինքնակատարելագործվող ուսուցիչներ | |
| Անտրտունջ մասնագիտական առաքելություն իրականացնող ուսուցիչներ | |
| Խստապահանջություն իր և աշակերտի նկատմամբ | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Նորարարությունների ոչ ճիշտ ընկալումը | Փորձի փոխանակում այլ հաստատությունների նորարար ուսուցիչների հետ |
| Կրթության ժամանակակից առաջնահերթությունների սխալ գիտակցումը | Տեսանելի դարձնել խնդիրները, լուծումների առաջարկությունների լայն քննարկում |
| Հասարակության մեջ ուսուցչի հեղինակության նկատմամբ հարգանքի պակաս | Նպաստել հասարակության կողմից կրթության առաջնահերթության ընկալմանը, ուսուցչի կողմից մրցութային միջոցառումների մասնակցությանը |
| Շահառու կողմերի տարաձայնություններ | Շահառու խմբերի ակտիվ ներգրավվածություն կրթական գործընթացում |
| Ստեղծագործական ժամանակի խնդիր, հատկապես համայնքից դուրս ապրող մանկավարժների համար | |

*Ծնողական խորհրդի*

| **ՈՒժեղ տեղեր** | **Թույլ տեղեր** |
|---|---|

| | |
|---|---|
| Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: | Կրթվածության ցածր մակարդակ |
| Դասղեկներին աջակցում են էքսկուրսիաների, այցելությունների և այլ միջոցառումների կազմակերպման հարցերում | Ազգային սովորույթներ |
| | Նախաձեռնողականության պասիվություն |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Հետաքրքրվածության պակաս | Ուսումնական պրոցեսում ներգրավվածության խթանում |
| Սոցիալական կարգավիճակ | Իրազեկվածության մակարդակը բարձրացնելու նպատակով խորհրդատվությունների, քննարկումների կազմակերպում |
| Ծնողների գիտությամբ՝ ազգությամբ եզդի աշակերտների դասերին անկանոն հաճախելը | Մանկավարժների, դասղեկ-ների,տնօրինության կողմից լայն բացատրական աշխատանքնեի կազմակերպում՝ կրթության դերի և նշանակության մասին |

*Աշակերտական խորհրդի*

| **Ուժեղ տեղեր** | **Թույլ տեղեր** |
|---|---|
| Համախմբվածություն, պատրաստակամություն, համագործակցություն ցանկացած միջոցառում իրականացնելիս | Աշակերտների քիչ թվաքանակ |
| Մեկ ընտանիքի գաղափարը | Աշակերտների շրջանում/հայեր և եզդիներ/ ազային տարբեր սովորույթների պատճառով ներդաշնակության պակաս |
| Գործում է ժողովրդավարական սկզբունքներով | |
| Սովորողների տարիքային առանձնահատկություններին, նախասիրություններին, | |

| | |
|---|---|
| հետաքրքրություններին համապատասխան՝ պլանավորված էքսկուրսիաների և այցերի կազմակերպում | |
| Աշակերտավայել արտաքին, հագ ու կապ, վարվելաձև | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Աշակերտների արտահոսք | ՈՒսումնասիրել արտահոսքի պատճառները՝ անհատական աշխատաք կատարել դպրոցից դուրս եկող աշակերտների ծնողների հետ |

***Համայնքի, կրթական կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ հարաբերությունների***

| **ՈՒժեղ տեղերը** | **Թույլ տեղերը** |
|---|---|
| Միասնական նպատակներին հասնելու համար ամողջությամբ և լրիվ իրագործում ենք կրթության կառավարման մարմինների դպրոցին վերաբրող իրավական ակտերի պահանջները | Հեռավորությունը մայրաքաղաքից, մարզկենտրոնից ու հարակից դպրոցներից |
| Ըստ անհրաժեշտությյն մասնկցում ենք կրթության կառավարման մարմինների, Արագածնոտի մարզպետարանի, Թալինի համայնքապետարանի կողմից իրականացվող՝ դպրոցին վերաբերող ժողովներին,սեմինարներին քննարկումներին, հանդես ենք գալիս դիտողություններով և առաջարկություններով | Խոշորացված համայնք |
| Դպրոցը Լուսակն համայնքի համար դարձել է մշակույթային լուսավորչական կենտրոն | Մշտական գործող տրանսպորտի բացակայություն |
| Դպրոցի և համայնքի միջև ապահով-վել է միմյանց աջակցելու պատրաստակամություն: | |

| Ռիսկեր | Ռիսկերը մեղմող գործողություններ |
|---|---|
| Չմռան ընթացքում ճանապարհների փակվելը և հաղորդակցությունների խափանումը,արդյունքում միջոցառումների կազմակերպման և մասնակցության ձախողումը, հատկապես օլիմպիադաների: | Միջնորդել համապատասխան մարմիններին սեփական փոխադրամիջոց ձեռք բերելու համար |
| Նոր դպրոցի շահագործման հանձնելու ձգձգումը | Բացատրական աշխատանք իրականացնել համայքից մանկավարժական ԲՈՒՀ-եր դիմողների թիվը ավելացնելու և դպրոցը տեղացի մանկավարժներով համալրելու համար |

*Հաստատության կրթական միջավայրը*

| ՈՒժեղ տեղերը | Թույլ տեղերը |
|---|---|
| Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ | Շենքային վատ պայմաններ՝ սահմանափակ հնարավորություններով |
| Թե՛ աշխատողները և թե՛ սովորողները <<մենք>> -ի գաղափարի կրողներն են | Լոկալ ջեռուցման բացակայություն |
| Բոլոր աշխատողների ու սովորողների կողմից սրտացավ ու հոգատար վերաբերմունք դպրոցի ու նրան ամրացված գույքի նկատմամբ | Գազամատակարարման բացակայություն |
| Բարոյական արժեքների գերիշխում | Սեզոնային վտանգներ՝ տաք սեզոնին սողունների և թունավոր միջատների ներթափանցում դպրոց, դպրոցամերձ տարածք, ցուրտ սեզոնին՝ գայլերի ու աղվեսների <<անարգել զբոսանք>> դպրոցամերձ տարածքներում |
| Աշխատանքի արդյունավետության շարունակական աճ | ՈՒսումնական տարածքի փոքր և սահմանափակ հնարավորություններ ունենալու պատճառով արտադպրոցական խմբակների, ինչպես նաև երկարօրյա ուսուցում կազմակերպելը հնարավոր չէ, քանի |

| | |
|---|---|
| | որ հնարավոր չէ սնունդ տրամադրել: |
| Կառավարելի գործողություններ | Ներկա դրությամբ դպրոցը չունի էլեկտրոնային գրատախտակներ |
| Դասապրոցեսի, կրթության որակի ապահովման նպատակով բազմաբովանդակ միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում | Գրադարանի գրքերի սակավություն, իսկ զգալի մասն էլ <<հիվանդ >> են |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Գործող շենքի վթարայնության աստիճանի օր օրի ավելացում | Դպրոցի նոր շենք տեղափոխում՝ ժամանակակից պայմաններին համապատասխան ուսումնական միջավայր: |
| ՈՒսումնական ֆիզիկական միջավայրի անբավարար պայմանների պատճառով կրթության նկատմամբ հետաքրքրության նվազում: | Նոր շենքի շահագործումից հետո խմբակների գործունեության ընդլայնում, ֆիզիկական միջավայրի գրավչություն: |

***Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումների***

| **ՈՒժեղ տեղերը** | **Թույլ տեղերը** |
|---|---|
| Ստեղծագործական և մասնագիտական կատարելագործման նպատակով առաջադրվում են նոր նպատակներ ու խնդիրներ | Ցածր վարձատրություն |
| Բոլոր ուսուցիչները լավ տիրապետում են համակարգչային տեխնոլոգիաներին և հաջողությամբ կիրառում են ուսուցման պրոցեսում | Հեռավորությունը հարակից բնակավայրերից, հասարակական տրանսպորտի բացակայություն |
| Ակտիվություն մասնագիտական գործունեության մեջ | ՈՒսուցչանոցի բացակայություն |
| Ուսուցիչների կողմից կիրառվող | |

| | |
|---|---|
| նորարար միջոցներ | |
| Սովորողների կրթության ու դաստիարակության գործը բացարձակ առաջնահերթություն համարելը | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Տղամարդ ուսուցիչների պակաս | Կամավոր անստավորման խրախուսում |
| Միայն ներդպրոցական փորձով սահմանափակվելը | Ուսուցման ժամանակակից մեթոդների ներդրման շարունակականության ապահովում |
| Ոլորտը կարգավորող իրավական ակտերի փոփոխության հաճախակիություն, որն էլ հանգեցնում է թյուրըմբռնումների | Այլ ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն, փորձի փոխանակում |
| | Միջդպրոցական մեթոդական միավորումների ստեղծում |

*Հաստատության տրամադրած կրթության որակի*

| **ՈՒժեղ տեղերը** | **Թույլ տեղերը** |
|---|---|
| Դպրոցում երաշխավորված է սովորողների կրթություն ստանալու հիմնարար իրավունքը | Ազգային սովորույթների բացասական ազդեցություն |
| Բարձր հեղինակություն և որոկավորում ունեցող ուսուցիչներ | Հարմարեցված ուսումնական միջավայր |
| Ավարտական գնահատականների բարձր ցուցանիշ | Սեփական ուսումնական պաշարների ֆոնդի բացակայություն |
| Մասնակցություն արտադասա-րանական, արտադպրոցական միջոցառումներին | Պարբերականներում գիտական և մանկավարժական հոդվածների բացակայություն |
| Աշխատանքային կարգապահութ-յուն | Անհրաժեշտ ուսումնանյութական բազայի անբավարար ապահովվածություն |
| Տնօրինության կողմից բազմա-նպատակ և բազմակողմանի վերահսկողության իրականացում | |
| Քննությունների նախապատ- | |

| | |
|---|---|
| րաստական աշխատանքների իրականացում | |
| Այցելություններ և էքսկուրսիաներ | |
| Օլիմպիադաներին մասնակցող սովորողների հետ լրացուցիչ աշխատանքների իրականացում | |
| Աշակերտների ամբողջական և ներդաշնակ զարգացմանն ուղղված գուրծընթացների կազմակերպում | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Վաղ տարիքից գումար վաստակելու ձգտում | Տարբեր խմբակների գործունեության շնորհիվ հետաքրքրությունների ընդլայնում, մասնագիտական կողմնորոշում |
| ՌԻսման նկատմամբ հետաքրքրության նվազման միտում | Շահառու խմբերի հետ համագործակցության սերտացում: |
| Սոցիալական միջավայրի բացասական ազդեցություն | Զբաղվածության ավելացում |

***Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաներ և կիրառվող նորարարությունների***

| **ՈՒժեղ տեղեր** | **Թույլ տեղեր** |
|---|---|
| Կրթական էլեկտրոնային ռեսուրսներից օգտվելու ձգտում և հնարավորություն | Համակարգչային կաբինետի բացակայություն |
| Անհրաժեշտության դեպքում համագործակցություն մենթոր դպրոցների հետ Teams կրթական հարթակի միջոցով | Համակարգիչների մաշվածություն |
| Պռոեկտորի, տեսախցիկների, բարձրախոսի, նոր համակարգչի առկայություն | ՏՀՏ-ների պակաս |
| Նորարարություններին ձգտող և պատրաստակամ ուսուցիչներ | |

| | |
|---|---|
| Հասանելի և որակյալ ինտերնետ | |
| Էլեկտրոնային մատյանների վարում և վերահսկողության իրականացում | |
| Էլեկտրոնային փաստաթղթաշրջա-նառություն | |
| ՏՀՏ-ների կիրառում դասապրոցեսում | |
| Հեռավար տեսակոնֆերանսների մասնակցության ապահովում | |
| **Ռիսկեր** | **Ռիսկերը մեղմող գործողություններ** |
| Նորարարությունների առատություն | Ոլորտի գիտակների հետ հանդիպումների կազմակերպում |
| Պահանջների և պարտականություն-ների ավելացում | |

## 4.ՆՊԱՏԱԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ , ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ,ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐ

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

### *1.Շենքային պայմաններ և նյութատեխնիկական բազա*

**Նպատակ** Շենքային պայմանների պահպանում , նյութատեխնիկական բազայի համալրում, թարմացում

| | |
|---|---|
| **Խնդիր 1** | Շահագործման հանձնված նոր շենքի պահպանում և գույքի խնամքով օգտագործում |
| *Գործողություններ* | Մշտապես վերահսկել շենքի և գույքի պահպանման պատասխանատուների աշխատանքը: Շահառու բոլոր խմբերի սրտացավ ու հոգատար վերաբերմունքի շնորհիիվ նպաստել բարեկեցիկ միջավայրի |

| | |
|---|---|
| | պահպանմանը: |
| *Ակնկալվող արդյունք* | Սկզբնական վիճակի պահպանում , անհրաժեշտության դեպքում՝ նյութատեխնիկական բազայի համալրում: |
| *Պատասխանատուներ* | Համակարգող, տնօրեն |
| *Ժամկետներ* | Առաջիկա 5 տարիների ընթացում |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Դպրոցը կունենա բավարար միջոցներ, քանի որ շենքն ու գույքն ամբողջովին նոր է լինելու, անհրաժեշտության դեպքում տնտեսված միջոցների հաշվին ձեռք բերել պահանջվող նյութատեխնիկական միջոցները: |
| *Ռիսկեր* | Բնական աղետներ |
| **Խնդիր 2** | Բացօթյան տաղավարի կառուցում, որը կծառայի և՛ որպես ընթերցասրահ, և՛ որպես դասասենյակ |
| *Գործողություններ* | Նախագծի կազմում, թույլտվության ստացում, ծրագրի հաստատում, ֆինանսական միջոցների հայթայթում , կառուցում: |
| *Ակնկալվող արդյունք* | ՈՒնենալ բաօթյա հարմարավետ տաղավար, որտեղ կարելի է անցկացնել տարբեր առարկաների առանձին պարապմունքներ, ընթերցումներ, ինչպես նաև անցկացնել սեմինարներ, խորհրդակցություններ: |
| *Պատասխանատուներ* | Տնօրեն , համակարգող |
| *Ժամկետներ* | 2026թ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Բարերարներ, եթե կլինեն, եթե ոչ՝ սեփական միջոցների տնտեսումներ, ծնողական համայնքի աջակցություն: |
| *Ռիսկեր* | Թույլտվություն չստանալը, ֆինանսական անբավարար միջոցներ: |

**2.Դպրոցի Ֆինանսական գործունեություն**

**Նպատակ** Ֆինանսական վիճակի բարելավում

| | |
|---|---|
| **Խնդիր 1** | Ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործում, վիճակի կայունության ապահովում |
| *Գործողություններ* | Բյուջեի կազմման ժամանակ խուսափել |

| | |
|---|---|
| | ավելորդ ծախսերից՝ տնտեսելով սեփական միջոցները:<br>Բյուջեի ճիշտ պլանավորում |
| *Ակնկալվող արդյունք* | Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովում, կրթական գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ապահովում: |
| *Պատասխանատուներ* | Համակարգող, տնօրեն |
| *Ժամկետներ* | 2024-2029թթ , յուրաքանչյուր տարվա կտրվածքով |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Սեփական ներուժ |
| *Ռիսկեր* | Աշակերտների թվաքանակի նվազեցում, որն էլ կհանգեցնի դասարանների թվի նվազման կամ վերակոմպլեկտավորմանը, արդյունքում կնվազի պետական ֆինանսավորումը |
| <u>**Խնդիր 2**</u> | Արտաբյուջետային միջոցների ձևավորում |
| *Գործողություններ* | - ավելացմել համայնքի և ծնողական հանրության ներդրումները,<br>- կազմակերպել ցուցահանդես վաճառք<br>- Սեփական արտադրանքի իրացում , շահույթի ստացում |
| *Ակնկալվող արդյունք* | ֆինանսական միջոցների կայունացում |
| *Պատասխանատուներ* | Տնօրեն , համակարգող, դասղեկներ |
| *Ժամկետներ* | 2025-2029թթ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Նվիրատվություն, սեփական միջոցներ |
| *Ռիսկեր* | Համայնքի և ծնողների ներգրավվածության, պասիվություն |

<u>3.Կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների գործունեություն</u>

<u>**Նպատակ**</u> Կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության սերտացում, գործունեության բարելավում

| <u>**Խնդիր 1**</u> | Համագործակցության ակտիվացում |
|---|---|
| *Գործողություններ* | • Համատեղ քննարկումների, կլոր սեղանների կազմակերպում<br>• Իրավական ակտերի համատեղ ուսումնասիրում<br>• Համատեղ միջոցառումների և |

| | |
|---|---|
| | այցերի կազմակերպում<br>• գործունեության հրապարակայնության ապահովում<br>• խրախուսանքի կիրառում<br>• լավագույն փորձի ուսումնասիրում |
| *Ակնկալվող արդյունք* | Գործունեության բարելավում, որոկական, դրական փոփոխություններ |
| *Պատասխանատուներ* | Տնօրեն, խորհրդի , խորհրդակցական մարմինների նախագահներ |
| *Ժամկետներ* | 2024-2029թթ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Նյութական միջոցներ չի պահանջվում |
| *Ռիսկեր* | Մասնակցության պասիվություն՝ մոտիվացիայի պակաս : |

## 4.Աշակերտական խորհուրդ

**Նպատակ** Ազգային արժեքները կրող և վերարտադրող, պատասխանատու, արժանապատիվ քաղաքացու ձևավորում:

| | |
|---|---|
| **Խնդիր 1** | Սովորողների մոտ խթանել հետաքրքրությունը կրթության նկատմամբ, նրանց բնածին ունակությունների, ներքին խթանների ու ակտիվության զարգացում: |
| *Գործողություններ* | • Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում<br>• Ընդգրկել և մասնակից դարձնել հասարակական ակտիվությունը խթանող, հասարակական գիտակցությունը բարձրացնող միջոցառումներին ու ծրագրերին<br>• Մեծանուն մարդկանց կյանքի ու գործունեության մասին ֆիլմերի |

| | |
|---|---|
| | դիտում, ընթերցանությունների կազմակերպում, այցերի կազմակերպում տուն-թանգարաններ<br>• Խրախուսել նախաձեռնողականությունը<br>• Կազմակերպել քննարկումներ, բանավեճեր սովորողների իրավունքների ու պարտականությունների, բարեվարքության կանոնների վերաբերյալ<br>• Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում<br>• Ծնողների կողմից դասալսումների կազմակերպում յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը<br>• Օլիմպիադաններին մասնակցության խրախուսում |
| *Ակնկալվող արդյունք* | Լուսավոր, առաջադեմ, զարգացած, օրինակելի , ազգային նկարագիրը պահպանող ու փոխանցող անհատ: |
| *Պատասխանատուներ* | Դասղեկներ, մանկավարժական աշխատողներ, ծնողներ |
| *Ժամկետներ* | 2024-2029թթ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |
| *Ռիսկեր* | Աշակերտների թվաքանակի պակաս |

**5.Մանկավարժական համակազմ**

**<u>Նպատակ</u>** Մանկավարժական արդի պահանջներին բավարարող, զարգացած, ուժեղ, աշակերտներին ոգեշնչելու ունակությամբ օժտված մակնավարժական համակազմ:

| | |
|---|---|
| **<u>Խնդիր 1</u>** | Մանկավարժական արդի պահանջներին համապատասխան մանկավարժի որակավորումն ապահովող շարունակական վերապատրաստումների և միջոցառումների իրականացում |

| | |
|---|---|
| **Խնդիր 2** | Երիտասարդացող մանկավարժական կոլեկտիվում միջանձնային առողջ հարաբերությունների ձևավորում |
| *Գործողություններ* | • Առարկայական մեթոդական միավորումներում քննարկել խնդիրները, բացահայտել կարիքները<br>• Ներդնել ուսուցիչների կողմից առարկայական ուսումնամեթոդական նյութերի մշակման և դրանց ուսումնական գործընթացում ներդրման շարունակական մեխանիզմ<br>• Պահպանել պարտադիր ատեստավորման շարունակականությունն ըստ սահմանված ժամանակացույցի:<br>• Ըստ անհրաժեշտության, կազմակերպել համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով առարկայական վերապատրաստումներ<br>• Նպատակային սեմինարների և քննարկումների կազմակերպում ԿԶՆԱԿ-ի մասնագետների հետ<br>• Լավագույն մանկավարժների հետ հանդիպումների կազմակերպում ու փորձի փոխանակում<br>• Նպաստել ուսուցիչների մասնագիտական աճին, խթանել նրանց մասնագիտական հետևյալ առանցքային կոմպետենցիաների զարգացմանը.<br>- առարկայական-մեթոդական<br>- հոգեբանամանկավարժական<br>- ճանաչողական<br>- սոցիալ-մշակութային<br>- հանրամշակութային<br>- նախաձեռնողական-կազմակերպական<br>- գիտահետազոտական<br>- հաղորդակցական<br>- կառավարման<br>- տեղեկատվական- |

| | |
|---|---|
| | տեխնոլոգիական<br>- խոսքային-լեզվական<br>• Փոխադարձ դասալսումների կազմակերպում, ուսումնական նյութերի փոխանակում<br>• Խրախուսումներ<br>• Դասավանդողների ինքնուրույնության և հաշվետվողականության ավելացում<br>○ Մղել ուսուցիչներին դիտարկելու իրենց ամբողջի մաս, որի անդամները փոխադարձաբար պիտի լրացնեն ու ամբողջացնեն միմյանց<br>○ Առողջ միջավայրի ապահովում, ուր ուսուցիչներն ընդհանուր նպատակներն իրագործելու համար պիտի լրացնեն և օգնեն միմյանց<br>○ Նպաստել, որպեսզի ուսուցիչներն համագործակցելով մշակեն դպրոցի ընդհանուր նպատակներին հասնելու գործնական քայլեր |
| *Ակնկալվող արդյունք* | Դասավանդման որակի բարելավում,առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանում, միջանձնային առողջ հարաբերություններ |
| *Պատասխանատուներ* | Տնօրեն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ |
| *Ժամկետներ* | 2024-2029թթ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Սեփական ներուժ |
| *Ռիսկեր* | Տարակարծություններ |

## 6. Հաստատությունում կրթության որակի ապահովում

**Նպատակ** Կրթության որակի բարելավում՝ ապահովելով բոլոր սովորողների համար ուսուցման լավագույն հնարավորությունները:

| | |
|---|---|
| <u>**Խնդիր 1**</u> | Կրթական գործընթացին համարժեք վերջնարդյունքների ապահովում: |

| | |
|---|---|
| *Գործողություններ* | • Ուսուցիչների ընդհանուր մոտեցումների ձևավորում՝ աշակերտների առաջընթացի համար<br>• Առարկաների բովանդակության վերահսկում և մատուցման արդյունավետություն<br>• Ուսուցիչների կարողությունների առաջընթացի ապահովում<br>• Նորորարական միջոցների առաջնահերթություն<br>• ՈՒսուցիչների մեջ ձևավորել գնահատման արդի համակարգի բավարար հմտություններ<br>• Գնահատման արդյունավետության վերահսկում<br>• Անցանկալի արդյունքների գրանցման դեպքում արագ արձագանքելու հմտությունների ձևավորում<br>• Տարբեր տեսակի քանակական և որակական տվյալների հավաքագրում, որոնք պետք է հաղորդեն դպրոցի իրական վիճակի մասին տեղեկատվություն՝ կարևոր որոշումների կայացմանը աջակցելու համար<br>• Նպաստել <<Տարվա լավագույններ>> մրցույթին մասնակցելուն<br>• Մեծացնել հանրային վստահությունը:<br>• Հաշվետվողականության ապահովում և հանրայնացում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին<br>• Տարեկան հաշվետվությամբ |

| | |
|---|---|
| | ամփոփել արդյունքները |
| *Ակնկալվող արդյունք* | **Չափորոշիչով** սահմանված վերջնարդյունքների ապահովում |
| *Պատասխանատուներ* | Տնօրեն, համակարգող, մ/մ նախագահներ, մանկավարժական աշխատողներ |
| *Ժամկետներ* | 2024-2029թթ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Առկա մարդկային, նյութատեխնիկական և առցանց ռեսուրսներ |
| *Ռիսկեր* | Դասավանդողների պարտականությունների ավելացում |

**7.Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ**

**Նպատակ** *Համայնքում կրթական քաղաքականության իրականացման համար նպաստավոր պայմանների և միջավայրի զարգացում*

| | |
|---|---|
| **<u>Խնդիր 1</u>** | Համատեղ միջոցներով և հնարավորություններով կրթական կարիքի բավարարում |
| *Գործողություններ* | • Շարունակական բնույթ կրող համագործակցությունների սերտացում նշյալ ոլորտների հետ<br>ա. Արագածոտնի մարզպետարանի<br>բ. ԿԳՄՍ նախարարության<br>գ.ԿՏԱԿ-ի<br>դ.ԳԹԿ-ի<br>ե.ՏՄԱԿ-ի<br>• Համայնքի հետ միասին դպրոցի նոր շենքի բացման միջոցառման կազմակերպում<br>• Աջակցություն և մասնակցություն համայնքային միջոցառումներին<br>• Համայնքի հետ համատեղ շաբաթօրյակի և ծառատունկի կազմակերպում<br>• ԱԻՆ-ի հետ համատեղ սեմինարների, |

| | |
|---|---|
| | խորհրդատվությունների, փործնական վարժանքների անցկացում<br>• Համախակիացնել այցերը N զրամաս<br>• Հանդիպում - դասախոսությունների անցկացում N զորամասի սպայական կազմի հետ համատեղ<br>• N զորամասի հետ համատեղ միջոցառումների շրջանակի ընդլայնում<br>• Այց Վազգեն Սարգսյանի անվան ՌՈՒՀ<br>• Աջակցություն ոստիկանության կողմից կազմակերպվող միջոցառումներին<br>• Ամբուլատորիայի հետ համատեղ պարտադիր միջոցառումների իրականացում<br>• Փոխհամաձայնության դեպքում հանրայնացնել և լուսաբանել միջոցառումների արդյունքները դպրոցի կայքում և այլ հարթակներում: |
| *Ակնկալվող արդյունք* | Համատեղ ջանքերով դժվարությունների հաղթահարում և ցանկալի արդյունքի ապահովում |
| *Պատասխանատուներ* | Տնօրեն, համակարգող, դասղեկներ |
| *Ժամկետներ* | 2024-2029թթ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Սեփական ներուժ |
| *Ռիսկեր* | Կարիքի ոչ ճիշտ գնահատում |

**8. ՌԻսումնական միջավայր**

**<u>Նպատակ</u>** Կրթության որակի բարելավմանը նպաստող ուսումնական միջավայրի ձևավորում:Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ապահովում:

| **<u>Խնդիր 1</u>** | ՌԻսումնական միջավայրի բարելավում |
|---|---|
| *Գործողություններ* | • Նոր շենքի շահագործման |

| | |
|---|---|
| | դեպքում ֆիզիկական միջավայրի անվնաս պահպանում<br>• Կանաչ միջավայրի ավելացում ու խնամք<br>• Շահառու կողմերի միջանձնային հարաբերությունների սերտացում, տարաձայնությունների հարթում<br>• առողջ բարոյահոգեբանական մթնորտի ապահովում |
| *Ակնկալվող արդյունք* | Օրինակելի, հարմարավետ ու համագործակցային կրթական միջավայր |
| *Պատասխանատուներ* | Տնօրեն, համակարգող, դասղեկներ, ծնողական խորհուրդ |
| *Ժամկետներ* | 2024-2029թթ |
| *Նյութատեխնիկական միջոցներ* | Սեփական ներուժ և ծնողական ներդրումներ |
| *Ռիսկեր* | Նոր շենքի շահագործման հետաձգում |

**9. Տեխնոլոգիաներ և նորարարություններ**

